Ազգ
Azg
24 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՇԱԲԱԹ 210(5062)
ISSN: 1829-1651

# Հայազգի լրագրողի հայտարարության պատճառով թուրքական CNN Turk-ը տուգանվել է

Թուրքական CNN Turk հեռուստաընկերությունը պատժվել է ուղիղ եթերում Թուրքիայում բնակվող հայազգի լեզվաբան, «Թարաֆ» պարբերականի լրագրող Սեւան Նշանյանի արած հայտարարությունների պատճառով: Այս մասին հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով թուրքական «Զաման» պարբերականը:

Թուրքիայի Ռադիոյի եւ հեռուստաընկերության վերահսկիչ մարմինը որոշում է կայացրել պատժել թուրքական հեռուստաընկերությանը, որ հաղորդումներից մեկի ժամանակ հյուրընկալված հայազգի լրագրողը, խոսելով վերջին շրջանում մեծ աղմուկ հանած «Մուսուլմանների անմեղությունը» ֆիլմի մասին, քննադատել է Մուհամմեդ մարգարեին, մինչդեռ հաղորդավարը չի ընդհատել նրան եւ թույլ է տվել շարունակել:

Թուրքական պարբերականի տեղեկացմամբ՝ հաղորդումից հետո հեռուստադիտողներից շատերն իրենց բողոքի նամակն են հղել Ռադիոյի եւ հեռուստաընկերության վերահսկիչ մարմնին, որն էլ, դիտելով հաղորդման տեսագրությունը, որոշել է պատժել հեռուստաընկերությանը:

# Ավելի քան 21 միլիոն դոլար՝ մեր գյուղական շրջանների եւ աղետյալ սիրիահայության համար




Հակառակ ոմանց կարծիքին, վստահորեն կարելի է ասել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի ղեկավարության եւ մասնաճյուղերի կազմակերպած դրամահավաքի ձեռնարկների (հեռուստատեսային եւ այլ մարաթոններ, ճաշկերույթ-հանդիսություններ, համերգներ եւ այլն) այս տարվա հասույթը, որպես հնչուն մասնակցություն կամ մասնակցության խոստում, գոհացուցիչ է: Ամեն ինչից երեւում է, որ ձեռնարկների կազմակերպիչները հետզհետե ավելի պրոֆեսիոնալ են դառնում եւ տարիների ընթացքում կատարելագործում իրենց աշխատանքը՝ ամեն անգամ գումարների հավաքագրման աշխարհագրությունը եւ մասնակիցների թիվը ընդարձակելով: Օրինակ, Հնդկաստանի մուտքը հայկական այդ քարտեզ՝ բացառիկ անակնկալ է. թեեւ դեռեւս չգիտենք այդտեղ հանգանակված 600 հազար դոլարի ծագումնաբանությունը: Խրախուսիչ է նաեւ այն կարեւոր ներդրումը, որը վերջին տարիներին ցուցաբերում են մեր ամենաբազմամարդ Ռուսաստանի համայնքի մեծահարուստները, գրեթե միշտ հավաքագրելով ընդհանուր գումարի կեսից ավելին:

Այսուհանդերձ, դեռեւս շատ աշխատանք կա անելու հանգանակվող գումարը կրկնապատկելու եւ եռապատկելու համար: Հայության նյութական կարողություններին լավատեղյակները պնդում են, որ տարեկան 100 միլիոն դոլարի ցուցանիշը դյուրավ հասանելի է մեր ժողովրդի համար, եթե հանգանակության ձեւերն ու գործիքները ճիշտ կազմակերպվեն:

*Տես էջ 3*

# Համանախագահները Ստեփանակերտից եկան Երեւան

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է տարածաշրջանային այցով Երեւան ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեին (ԱՄՆ), Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ժակ Ֆորին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:

Ինչպես տեղեկացրին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, հանդիպման մասնակիցները քննարկել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացի ներկա փուլին եւ հետագա քայլերին վերաբերող հարցեր:

Համանախագահները նախագահ Սերժ Սարգսյանին ներկայացրել են նաեւ Ստեփանակերտում ունեցած հանդիպումների արդյունքները:

# «Ալիեւի հերթական գլուխգործոցը»՝ արձագանքներ միջազգային լրատվամիջոցներում

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Կա կարծիք, թե Իլհամ Ալիեւը իր հայտարարությունների զգալի մասն ուղղում է այսպես կոչված ներքին լսարանին: Ընդ որում դրանք լինում են ծայրահեղ հայրենասիրական, անգամ խիստ ազգայնամոլական: Տրամաբանորեն նման ելույթներն ու հայտարարությունները Ալիեւն անում է ներադրբեջանական որեւէ միջոցառման ժամանակ, որին միջազգային մամուլը քիչ ուշադրություն է դարձնում, հետեւաբար Ալիեւը, այդ հայտարարություններն անելիս, պարտավորված չէ միջազգային լսարանին դուր գալ: Որպես նման ելույթ կարելի է որակել Ալիեւի խոսքը «Ենի Ազարբայջան» կուսակցության 20-ամյակի միջոցառմանը, որին «*Ազգը*» արդեն անդրադարձել է: Հարեւան երկրի նախագահի այդ ելույթից միջազգային շահագրգիռ լսարանն էլ բավական «զարմանահրաշ նրբություններ» ձեռք կբերեր, սակայն, ինչպես վերը նշեցինք, արտասահմանյան մամուլը ներադրբեջանական միջոցառումներին քիչ է անդրադառնում:**

**Այնուամենայնիվ, այդ ելույթը, պարզվում է, Ալիեւն ուղղել է նաեւ միջազգային լսարանին: Հիշեցնենք, որ իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության միջոցառմանն ունեցած ելույթում Ադրբեջանի նախագահը տալիս է Ադրբեջանի երկու թշնամիների անունները, մեկը՝ հայկական լոբբին, երկրորդը՝ «հակամահմեդական կենտրոններից սնվող հակաադրբեջանական կենտրոնները»: Եվ ահա, հավանաբար տեսնելով, որ իր այս ելույթը միջազգային մամուլում լայնորեն չի լուսաբանվում, Ալիեւը որոշել է դրանից որոշ կտորներ տեղադրել Twitter սոցիալական ցանցի իր բլոգում... արդյունքն իրեն երկար սպասեցնել չի տվել, ընդ որում, եթե միջազգային քաղաքական հանրությունը շարունակում է իրերն իրենց անուններով չանվանել ու պահպանել դիվանագիտական կոռեկտությունը՝ հավասարության նշան դնելով Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ, ապա միջազգային սոցիալական հանրույթը որեւէ կաշկանդվածություն չունի ասելու Ալիեւին այն, ինչ մտածում են իր ու իր երկրի մասին:**

*Տես էջ 2*

# «Արմավիայի» վաճառքը կավարտվի 2-3 շաբաթների ընթացքում

## *Ավիաընկերության մենեջմենտը անարդյունավետ է գնահատվում*




**Ռուսական daily-ին տված հարցազրույցում «Արմավիա» ավիաընկերության սեփականատեր Միխայիլ Բաղդասարովը հայտարարել է, որ ծրագրում է ավիաընկերության վաճառքի գործարքն ավարտին հասցնել առաջիկա 2-3 շաբաթների ընթացքում: Ավիաընկերության վաճառքի հիմնական պատճառներ են նշվել տնտեսական ճգնաժամը եւ ռուսական SuperJet նոր ինքնաթիռի շահագործումից կրած վնասը:**

**«Ընկերությունը գնելու հավակնորդների մեջ ռուս ներդրողներ չկան, սակայն կան իտալացիներ, ինչպես նաեւ գնորդներ՝ Արեւելքից», ասել է Միխայիլ Բաղդասարովը: Նրա տեղեկացմամբ, այժմ քննարկվում է «Արմավիայի» կապիտալում նոր սեփականատիրոջ մասնակցության ձեւը: Ավիաընկերությունը պարտքով է շահագործում SuperJet-ը, բայց ինքնաթիռը գրավից ազատված չէ:**

**«Սուխոյի քաղաքացիական ինքնաթիռների» պաշտոնական ներկայացուցչի խոսքերով՝ «Արմավիան» կշարունակի SuperJet-ի շահագործումը երկու ընկերությունների միջեւ առկա լիզինգային հարաբերությունների շրջանակում: 2013-ի սկզբից դրանք կշարունակվեն որպես վարձակալության պայմանագիր:**

**Միաժամանակ, ինքնաթիռի մատակարարող ընկերության մոտ կանգնած աղբյուրից daily-ին հայտնի է դարձել, որ «Արմավիայի» բոլոր պարտքային պարտավորությունները անցնելու են նոր սեփականատիրոջը: Նման իրավիճակը, նույն աղբյուրի հաղորդմամբ, խոսում է ավիաընկերությունում անարդյունավետ մենեջմենտի մասին:**

Ա. Ս.

# Արցախի վարչապետը գիտի էներգետիկայի արժեքը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Արցախը զարգանում է որպես ինքնուրույն ու անկախ երկիր, որպես պետություն ձեւավորվել է, Արցախում գնահատվում են մարդկային արժեքները, բնակչության թիվն ավելանում է, ժողովրդագրական պատկերը դրական է, մեկնող-ժամանողների, ծնվող-մահացողների հաշվեկշիռը (սալդոն) դրական է, մեզ հետ զրույցում աչքալույս է անում Արցախի վարչապետ **Արա Հարությունյանը**: Նա մասնագիտությամբ տնտեսագետ է, սկզբում բանկային համակարգում է աշխատել, իսկ վարչապետ նշանակվելու պահին բիզնեսաշխարհի ներկայացուցիչ էր: Եղել է պատգամավոր, «Ազատ հայրենիք» կուսակցություն ղեկավար, 39 տարեկան է: Վարչապետի հետ հանդիպման առիթը Արցախում ողջ թափով զարգացող հանքարդյունաբերության եւ կայացած էներգետիկայի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ստանալու հնարավորությունն էր: Վստահ ենք՝ սա կհետաքրքրի նաեւ մեր այն ընթերցողի համար, ով կուզենար ներդրում անել Արցախում:

Արցախում ավելի վաղ կար, գործում էր Սարսանգի 50 մեգավատանոց հիդրոէլեկտրակայանը, որը կառուցվել է խորհրդային տարիներին: Այն շահագործման է հանձնվել 1979 թվականին՝ Ղարաբաղի ամենախոշոր՝ Սարսանգի արհեստական ջրամբարի վրա: Ադրբեջանցիները հաշվել էին, որ Սարսանգի ջրամբարից կապահովեն Ադրբեջանի Աղդամի եւ Միրբաշիրի շրջանների ոռոգումը: Սակայն Արցախն անկախ պետություն է այժմ, իսկ Սարսանգի ջրամբարը՝ նրա կարեւոր էներգետիկ ենթակառուցվածքը: Անկախ Արցախը ծրագրեց իրականացնել ՀԷԿ-երի շինարարություն, որով կապահովվեին երկրի էլեկտրաէներգիայի պահանջները: Շինարարությունն սկսվեց 2007-ին, այսօր աշխատում են 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ, 2-ը՝ Քաշաթաղի շրջանում, չորսը՝ Մարտակերտի, դրանք կառուցված են Սարսանգի ջրամբարի եզրերով. «Այսօրվա դրությամբ ապահովվում է Արցախի ծախսած էլեկտրաէներգիայի 90, անգամ կարելի է ասել՝ 100 տոկոսը: Տարեցտարի սպառումն ավելանում է, եւ, բնականաբար, տարեցտարի պետք է ավելացվի արտադրության ծավալը», ասում է Արցախի վարչապետը:

*Տես էջ 4*

# Պատմական հուշարձանների անուններն ու պատմագրությունը կեղծվում են

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան **Էդիկ Մինասյանի** հավաստմամբ՝ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը տեղյակ է, որ պատմական հուշարձանների անունները կեղծվում են:

Մինասյանը նկատել է, որ մեր երկրի տարածքում պատմական հուշարձանների անունները կեղծվում են եւ ներկայացվում ադրբեջանական: Մինասյանը զանգել է նախարարին, ներկայացրել իրավիճակը: Տիկին նախարարը նախ զարմացել է, հետո կարգադրել, որ խնդիրը լուծեն:

«Անցել է մոտ մեկ տարի, սակայն հարցը մինչեւ վերջ լուծված չէ», ասում է Մինասյանը՝ հավելելով, որ Հաղպատի վանքի տեղեկատվական վահանակի վրա նշված է. «Սայաթ-Նովան դիվանագիտական առաքելություն էր կատարում Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի թագավորությունների համար»:



«Նախ՝ Սայաթ-Նովան երբեք չի եղել դիվանագետ եւ նման ծառայություն երբեք չի իրականացրել, իսկ Ադրբեջանը ստեղծվել է ընդամենը անցած դարասկզբին եւ չէր կարող լինել թագավորություն: Հետեւաբար, ակնհայտորեն կեղծվում են պատմական իրադարձությունները»:

Մինասյանի ներկայացմամբ՝ ոլորտի հայ փորձագետներից ոչ մեկը տեղյակ չէ ցուցակների պատրաստման աշխատանքներից: ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկանն առաջարկում է, որ նախ մասնագիտական փորձաքննություն անցկացվեր, տրվեր եզրակացություն, որի հիման վրա էլ կկազմվեին հուշարձանների տեղեկատվական ցուցանակները: «Մինչդեռ «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի» կազմակերպման աշխատանքը հանձնվել է ինչ-որ ամերիկյան կազմակերպության, որը, շատ հնարավոր է, Ադրբեջանի կողմից քաղաքական պատվեր է»: Հ. Հ.

# «Ալիեւի հերթական գլուխգործոցը»՝ արձագանքներ միջազգային լրատվամիջոցներում

*1-ին էջից*

Բայց նախ Twitter-ում հարեւան երկրի նախագահը մեջբերում է վերոհիշյալ միջոցառմանն իր ելույթից հետեւյալ մասը. «Հայաստանն առանց արժեքների երկիր է»: Մի շարք միջազգային լրատվամիջոցներ՝ անվանելով այս հայտարարությունը «Ալիեւի հերթական գլուխգործոց», ծիծաղելի են որակել այն. «Առնվազն ծիծաղելի է, երբ մի երկրի նախագահը սոցիալական ցանցում կարող է մեկ այլ երկրին վիրավորել»: Այս առումով հանրահայտ Foreign Policy-ն գրում է. «Ի՞նչ նմանություններ կան Ադրբեջանի, Էստոնիայի ու Ռուանդայի նախագահների միջեւ. նրանք երեքն էլ սիրում են առիթ փնտրել սոցիալական ցանցերում վիճաբանելու համար»: Մեկ այլ հանրահայտ լրատվամիջոց Reuters-ը նկատում է. «Ալիեւն ու նրա կառավարությունը փորձում են ավելացնել իրենց ներկայությունը համացանցում, որտեղ ադրբեջանցի այլախոհ բլոգերները եւ հայկական սփյուռքի ներկայացուցիչները, որոնց Ալիեւն անվանել է իր երկրի թիվ մեկ թշնամի, պարբերաբար հանդես են գալիս Ադրբեջանում մարդու իրավունքների թեմայի հայտարարություններով»: Սակայն Ալիեւին հեգնելու առումով ամենից առաջ գնացել է GlobalPost լրատվականը՝ մասնավորաբար գրելով. «Ալիեւը գրում է, ու դա նշված է նաեւ Ադրբեջանի նախագահի պաշտոնական կայքէջում, թե այդ երկրում կան բոլոր ազատությունները՝ խոսքի, խղճի, մամուլի, համացանցի: Ինչպիսի՜ ամոթ. այդ ի՞նչ ազատության մասին է խոսքը, երբ նույն այդ ազատությունը չի տարածվում ադրբեջանցի բազմաթիվ բլոգերների վրա: Շատ ադրբեջանցի ինտերնետ օգտագործողներ ստիպված են զբաղվել ինքնագրաքննությամբ, բայց ինչպես տեսնում ենք՝ ոչ նրանց նախագահը, թեեւ հանուն Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ շարունակվող բանակցությունների ավելի լավ կլիներ, եթե նա այդպես վարվեր», ընդգծում է GlobalPost-ը, իսկ մենք էլ զերծ մնանք որեւէ մեկնաբանությունից:

Միայն որպես վերջաբան հիշենք Գանդիին, սակայն հնդիկ փիլիսոփայի միտքը մեջբերենք «հակառակ իմաստով». «Սկզբում նրանք չեն նկատում քեզ, հետո ծիծաղում են քեզ վրա, հետո պայքարում են քո դեմ»: Միջազգային հանրությունն էլ՝ սկզբում չէր նկատում Իլհամ Ալիեւին, հիմա ծիծաղում է նրա վրա...



# Ռուսաստանի հայերի միությունը՝ «Տարվա կազմակերպություն»

Ռուսաստանում 1993-ին հիմնված «Տարվա մարդ» մրցանակաբաշխությունը արդեն 20-րդ անգամ հանձնվում է Ռուսաստանի կենսագրական ինստիտուտի կողմից՝ նշանավորելով յուրաքանչյուր տարի տարբեր ոլորտներում մեծ ներդրում ունեցած անձանց ու նրանց գործունեությունը: Այս տարի էլ «Տարվա մարդ» անվանակարգում մրցանակների են արժանացել **Իոսիֆ Կոբզոնը, Վիտալի Լոպոտան, Գագիկ Ծառուկյանը** եւ այլք:

Ըստ այդմ՝ «Տարվա կազմակերպություն» է ճանաչվել նաեւ Ռուսաստանի հայերի միությունը՝ **Արա Աբրահամյանի** նախագահությամբ՝«միջպետական ու ազգամիջյան հարաբերությունների ամրապնդման գործում ակնառու ներդրում ունենալու» համար: Այս մրցանակը հասկապես պատվավոր է, քանի որ նույն անվանակարգում մրցանակների են արժանացել Ռուս ուղղափառ եկեղեցու մոսկովյան պատրիարքարանը, Օստրովսկու անվան պետական ակադեմիական թատրոնը, «Մոսֆիլմ» կինոկոնցեռնը (գլխավոր տնօրեն՝ **Կարեն Շահնազարյան**) եւ այլ հաստատություններ:

ՌՀՄ գործունեությունը միջպետական ու ազգամիջյան հարաբերությունների ամրապնդման գործում ոչ միայն տարիների ժամանակահատված է ներառում, այլեւ շարունակական ու մշտապես նորացվող գաղափարներով իրականացվելու փորձ ունի: Հենց վերջերս՝ հոկտեմբերին, Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաստանի ադրբեջանցիների դաշնային ազգային-մշակութային ինքնավարության նախաձեռնությամբ Ռուսաստանի հայկական եւ ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչները համաձայնել են ստեղծել մշտապես գործող համատեղ կազմակերպական հանձնաժողով, որն օպերատիվորեն կարձագանքի Ռուսաստանի տարածքում առաջացող բախումնային իրավիճակներին:

«Մենք բոլորս Ռուսաստանի քաղաքացիներ ենք ու այստեղ կիսելու բան չունենք, հակառակը, մեր փոխգործակցությամբ մենք պետք է օրինակ ծառայենք այլ երկրներում ապրող մեր համայնքների համար», հանդիպման բացմանը նշել էր ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը: Նա շեշտել էր, որ այս հանդիպումների նպատակը ղարաբաղյան խնդրի լուծումը չէ: Ռուսաստանի ադրբեջանցիների ներկայացուցիչ **Սոյուն Սադիկովն** իր հերթին նշել էր, որ իր եւ Աբրահամյանի ընկերական հարաբերությունները հաճախ հնարավորություն են տվել լուծելու երկու համայնքների երիտասարդ ներկայացուցիչների միջեւ ծագած բախումային իրավիճակները:

Իսկ արդեն Հայաստանում ՌՀՄ մեկ այլ նախաձեռնություն դեռեւս ընթացքի մեջ է: Խոսքը Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախաձեռնությամբ, «Русский мир» (Ռուսաստանի Դաշնություն) հիմնադրամի մասնակի ֆինանսավորմամբ սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը Հայաստանի հանրակրթական բոլոր դպրոցներում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երկրորդ փառատոնի մասին է:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# Փոքրիկ մեկ բաժակ ջրում՝ ըստ Արամ Գ. Սարգսյանի

Երեկ ՀԴԿ նախագահ **Արամ Սարգսյանը**, անդրադառնալով վերջին քաղաքական զարգացումներին եւ նախագահական ընտրություններից առաջ առկա իրավիճակին, ընդամենը մեկ բաժակ ջրում փոթորիկ է անվանել տեղի ունեցողը: Եվ բացատրել է, թե ինչու է այդպես կարծում. ըստ նրա՝ այժմ գործող համակարգը եւ իշխանությունը հնարավորություն չեն տալիս նախագահական ընտրություններին խորհրդարանական ընտրություններից տարբեր արդյունք գրանցելու: Ընդհանուր առմամբ, նրա կարծիքով, երեք նախագահների ժամանակաշրջանը պետք է ավարտվի, որ ինչ-որ բան փոխվի: Նա խոսեց երկրի ամենամեծ խնդիր սոցիալական բեւեռացման, արտագաղթի մասին՝ այդ եւ համանման հարցերը պետք է լուծել, ու եթե գործող նախագահի կողմից գործնական քայլեր տեսնի երկրում կուտակված խնդիրների լուծման ուղղությամբ, ապա գուցեւ ՀԴԿ-ն քննարկի նախագահական ընտրություններում նրան աջակցելու տարբերակը:

# Մթերումների ծավալներն այս տարի ավելացել են

## *Գյուղացիների ունեցած պարտքն ամբողջությամբ կմարվի մինչեւ դեկտեմբերի 1-ը*

Այս տարի մթերվել է շուրջ 215 հազար տոննա՝ նախորդ տարվա 194 հազար տոննայի փոխարեն: Խաղող մթերվել է 157 հազար տոննա՝ նախորդ տարվա 129 հազար տոննայի դիմաց, իսկ մթերվող խաղողի միջին գինն աճել է 10 դրամով եւ կազմել 142 դրամ: Գյուղացիական տնտեսությունների եւ վերամշակող կազմակերպությունների միջեւ կնքվել է շուրջ 6900 պայմանագիր, որից 5900-ը՝ խաղողի, 1000-ը՝ բանջարեղենի մասով: Այս մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց գյուղատնտեսության փոխնախարար **Ռոբերտ Մակարյանը**:



Փոխնախարարը նաեւ տեղեկացրեց, որ մթերված պտուղ-բանջարեղենի դիմաց վճարումները կատարվել են գրեթե ամբողջությամբ: Վճարումների հիմնական մասը կատարվել է 7-10 բանկային օրվա ընթացքում: Նոյեմբերի 22-ի դրությամբ խաղողի մթերումների դիմաց վճարվել է ամբողջ գումարի 96,8 տոկոսը, չվճարված գումարը կազմել է 706 մլն դրամ: Պտուղ-բանջարեղենի դեպքում՝ վճարվել է մթերված ապրանքի արժեքի 93,4 տոկոսը, մնացել է 300 մլն դրամ: Ռոբերտ Մակարյանի տեղեկացմամբ՝ մթերողները իրենց պարտքը կմարեն մինչեւ դեկտեմբերի 1-ը:

Գյուղացիները մթերողների հետ սկսել են աշխատել նախապես կնքվող պայմանագրերով, որտեղ նշված են եղել մթերվելիք ապրանքի քանակը եւ գինը: Մթերելուց հրաժարվել էին «Բորոդինո» ընկերությունը, Էջմիածնի պահածոների գործարանը, Վայոց ձորի մարզի գինու գործարանները՝ արենի խաղողատեսակի հետ կապված, սակայն խնդիրը լուծվել է բանակցությունների միջոցով եւ նրանք եւս մթերումներ կատարել են:

Գյուղատնտեսության փոխնախարարի տեղեկացմամբ՝ այս տարի Հայաստանից արտահանվել 28,5 հազար տոննա պտուղ-բանջարեղեն, որը նախորդ տարվա ցուցանիշից ավելի է գրեթե կրկնակի:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հիպերհսկա աստղերի եւ գերնորերի առեղծվածային կապը

Եվրոպայի գիտական խմբերից մեկը վերջերս հրատարակեց HR 8752 հիպերհսկա աստղի 30 տարվա ուսումնասիրությունների արդյունքները:

Խումբը բացահայտել է, որ HR 8752 հիպերհսկա աստղի մակերեւութային ջերմաստիճանը բարձրացել է 3000´C-ով, քանի որ աստղն անցել է չափազանց անկայուն էվոլյուցիոն փուլի միջով: Այս հայտնագործությունը շատ կարեւոր է հիպերհսկա աստղերի զարգացումը հասկանալու համար:

Վեց եվրոպական երկրների գիտնականներից կազմված գիտական խումբը՝ հայազգի աստղագետ **Գարիկ Իսրայելյանի** մասնակցությամբ (Կանարյան կղզիների աստղաֆիզիկայի ինստիտուտ, Իսպանիա), մոտ երեսուն տարի ուսումնասիրում էր HR 8752 հիպերհսկա աստղը, որն անցնում էր մի չափազանց անկայուն էվոլյուցիոն փուլով, որը կարող է կտրուկ փոխել աստղի զարգացման ընթացքը: Ուսումնասիրությունների ընթացքում աստղի ջերմաստիճանը կտրուկ աճել է 5000´C-ից մինչեւ 8000´C: Այս արդյունքը, որը տպագրվել է «Աստղագիտություն եւ աստղաֆիզիկա» (Astronomy and Astrophysics) ամսագրում, կարեւոր խոսք է աստղերի էվոլյուցիայի տեսության մեջ:

Հիպերհսկաները տիեզերքում հայտնի ամենապայծառ աստղերն են: Դրանց պայծառությունները կարող են միլիոնավոր անգամ մեծ լինել Արեգակի պայծառությունից, իսկ չափերը կարող են հասնել հարյուրավոր արեգակնային շառավղի: Դրանց մակերեւութային ջերմաստիճաններն ընկած են 3500-35000´C տիրույթում (Արեգակի մակերեւութային ջերմաստիճանը մոտ 6000´C է): HR 8752-ը 250 000 անգամ ավելի պայծառ է, քան Արեգակը, եւ այն կարելի է տեսնել նույնիսկ փոքր հեռադիտակով Կասիոպեա հյուսիսային համաստեղությունում: Հիպերհսկաները հազվագյուտ աստղեր են. մեր գալակտիկայում հայտնի են ընդամենը 12-ը:

Անկայուն էվոլյուցիոն փուլի ընթացքում աստղի ջերմաստիճանն ու տեսանելի պայծառությունը կտրուկ փոփոխվում են: Աստղագետների խումբը հայտնաբերել է, որ հիպերհսկաների մթնոլորտները չափազանց անկայուն են այս փուլում, քանի որ դրանք լայնացնող ուժերը գերազանցում են ձգողականության ուժերին:



*Աստղագետ Գարիկ Իսրայելյան*

Երբ աստղերն իրենց էվոլյուցիայի ընթացքում մուտք են գործում այս ֆիզիկական պարամետրերի «արգելված գոտին», հսկայական զանգված են կորցնում (ավելի քան մեկ արեգակնային զանգված մեկ տարում)՝ դառնալով ծայրահեղ անկայուն: Այս պատճառով այս գոտում հայտնված աստղը պետք է լքի այն որքան հնարավոր է արագ: Սա է պատճառը, որ շատ աստղեր գտնվում են այս գոտու երկու կողմերում, եւ շատ քչերն են հանդիպում հենց այս գոտում:

HR 8752 հիպերհսկան գրավիչ է իր՝ այս գոտում գտնվելով, ինչը գիտնականներին թույլ է տալիս կատարել այս տիրույթի ֆիզիկայի մանրամասն ուսումնասիրություններ՝ պարզելու համար, թե ինչ է կատարվում աստղի հետ՝ ինչպես է կորցնում իր զանգվածը, որքան արագ է դրա մթնոլորտը փոփոխվում եւ այլն:

Աշխատանքի համահեղինակ Գարիկ Իսրայելյանը բացատրում է. «Դեռեւս 1999թ. տպված մեր հոդվածում մենք արդեն կասկածում էինք, որ աստղի ջերմաստիճանը մոտ 20 տարում բարձրացել է 3000´C-ով: 2000թ. նմանատիպ երեւույթ բացահայտվել էր ուրիշ հիպերհսկայի՝ Կասիոպեա համաստեղության Rho աստղի մոտ: Այս աստղերը մեծ ուշադրություն են գրավում, քանի որ մենք ակնկալում ենք, որ 1000 տարվա ընթացքում դրանք կվերածվեն գերնորերի: Գտնվելով այսպիսի հեռավորությունների վրա՝ շատ հնարավոր է, որ այս աստղերը վաղուց արդեն դադարել են գոյություն ունենալ, սակայն դրա մասին մենք կիմանանք հազարավոր տարիներ անց՝ երբ աստղերից եկող լույսը կհասնի մեզ»:

Վերջին տարիների ընթացքում Իսրայելյանը այս աստղի բազմաթիվ սպեկտրային ուսումնասիրություններ է կատարել Լա Պալմա կղզում տեղակայված Վիլյամ Հերշել (William Herschel Telescope, WHT) եւ Հյուսիսային օպտիկական (Nordic Optical Telescope, NOT) աստղադիտակներով, ինչպես նաեւ Տեյդեի աստղադիտարանի STELLA ռոբոտիկ աստղադիտակով: Այս տվյալները առայժմ գտնվում են մշակման փուլում եւ չեն հրատարակվել: «HR 8752-ի նման աստղերը լի են հետաքրքրական ֆիզիկական հանելուկներով, որոնք նոր պետք է բացահայտվեն», նշում է Իսրայելյանը:

Չնայած նախորդող լուսաչափական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1900-1985թթ. HR 8752-ի մակերեւույթային ջերմաստիճանը գրեթե հաստատուն է եղել՝ մոտ 5000´C, սակայն 1985-ից հետո խումբը բացահայտեց, որ աստղը շատ մոտ է կամ նույնիսկ հասել է անկայունության գոտու ստորին ջերմաստիճանային սահմանը, ինչը հիմք դրեց երեք տասնամյակ տեւած սպեկտրային ուսումնասիրությունների ծրագրին: Սպեկտրային ուսումնասիրությունները բացահայտեցին, որ 1985-2005թթ. ընկած 20 տարիների ընթացքում աստղի մակերեւութային ջերմաստիճանը կտրուկ աճել է 5000´C-ից մինչեւ 8000´C. այդ ընթացքում աստղը հսկայական զանգված է կորցրել, եւ դրա շառավիղը փոքրացել է 750 արեգակնային շառավղից (1985թ.) մինչեւ 400 արեգակնային շառավիղ (2005թ.):

Համահեղինակ **Հանս Նյուհեյզենը** (Նիդեռլանդների տիեզերական ուսումնասիրությունների ինստիտուտ, SRON) նշում է. «Մեր գիտական խումբը հսկայական համատեղ ջանքեր գործադրեց HR 8752-ը ուսումնասիրելու համար, եւ հիմա մենք ուրախ ենք տեսնելու այսպիսի հրաշալի արդյունք այսքան տարիներ հետո»:

«Այս կարեւոր հայտնագործությունը հաստատում է ֆիզիկական պարամետրերի արդեն տեսականորեն հետազոտված անկայուն էվոլյուցիոն գոտու գոյությունը», - նշում է **Կոռնելիս դե Յագերը** (SRON, Միջազգային աստղագիտական միության նախկին նախագահ):

Հայկական աստղագիտական ընկերություն

# Իբր դեղերի թանկացում չկա

Հայաստանի դեղարտադրողների եւ ներմուծողների միության նախագահ **Սամվել Զաքարյանը** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հերքեց դրանց թանկանալու մասին տեղեկությունները: Նրա հավաստիացմամբ՝ թանկացումներ չկան եւ այս շուկայում բավական կայուն վիճակ է: Այդուհանդերձ, Սամվել Զաքարյանը փաստեց, որ որոշ դեղամիջոցներ 6-8 տոկոսով թանկացել են:

Հայաստանի դեղարտադրողների եւ ներմուծողների միության նախագահը հայտնեց, որ միության եւ առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Մարկետինգային էթիկայի կանոնակարգ», որը կիրառվում է բոլոր զարգացած երկրներում: Այն պետք է սահմանի դեղագործական կազմակերպությունների էթիկայի կանոններ՝ սկսած դեղարտադրողների մարկետինգային, գովազդային գործունեությունից, մինչեւ պահելաձեւն ու աշխատաոճը, դեղարտադրողների եւ ներմուծողների գործունեության սահմանափակումները, պատժամիջոցներ կկիրառի այդ կանոնները շրջանցողների դեմ:

Ա. Մ.

# Ավելի քան 21 միլիոն դոլար...



*1-ին էջից*

**Թերեւս:** Համենայն դեպս, առանց փորձագետ լինելու էլ կարծում եմ, որ նախորդ օրը եզրափակված հանգանակության բացված ցուցակում խիստ անբավարար է Շվեյցարիայից, Բելգիայից, Բրազիլիայից, Արգենտինայից, Մոնրեալից ու մանավանդ Քուվեյթից ստացված կամ խոստացված գումարների չափը, իսկ Արաբական Միացյալ Էմիրության բացակայությունը ցուցակից՝ անբացատրելի է իսկապես:

Խիստ անբավարար է Մ. Նահանգների Արեւելյան ափից ստացված արդյունքը, ընդամենը՝ 600 հազար: Այնինչ այդքան գումար կարելի էր ապահովել Նյու Յորքից, Նյու Ջերսիից, Չիկագոյից, Ֆիլադելֆիայից կամ Դետրոյթից ընդամենը մեկ հայրենակցից: Եվ այդ արդյունքը ստիպում է ինձ մտածել, որ հիմնադրամի ղեկավարությունը արդեն 15 տարի անընդհատ Կալիֆոռնիայում կազմակերպելով հանգանակության գլխավոր՝ հեռուստամարաթոնը, սխալ է վարվում, մեկ անգամ եւս ընդգծելով հայաստանցիներից շատերի թյուր պատկերացումը, թե Մ. Նահանգները դա Լոս Անջելեսն է իր արբանյակ քաղաքներով: Այնինչ Արեւմտյան ափի հայաշատ քաղաքներում են գտնվում մեր բարեկեցիկ եւ առավել հարուստ ազգակիցները: Եվ հենց այդ շրջանի հայությունն է հիմնականում, որ ավելի քան 100 տարուց ի վեր վարժվել է նվիրատվություն, բարեգործություն անելու ավանդույթներին:

Եվ ընդհանրապես, եթե համեմատենք 0,5 միլիոնանոց ֆրանսահայ եւ 1,5 միլիոնանոց ամերիկահայ գաղութների հանգանակած գումարները, ապա, թեեւ փոքր չափով, երկրորդը զիջում է առաջինին: Պատճառները արժանի են ավելի լուրջ ուսումնասիրության:

Այսուհանդերձ, ներկա հանգանակության կարեւորագույն առանձնահատկությունն էլ՝ սիրիահայությանը օգնել-նպաստելու նպատակն էր, ընդհանուր գումարներից մասհանումը դեպի այդ աղետյալ գաղթօջախը: Դա շեշտում էր «Հայաստան» հիմնադրամի իսկապես համահայկական բնույթը եւ ընդգծում, որ բովանդակ հայության որեւէ շերտի կամ հատվածի կարիքի մեջ հայտնվելու դեպքում, հիմնադրամը պիտի հասնի օգնության՝ անկախ աշխարհագրական դիրքից ու վայրից, դա լինի Արցախի, Հայաստանի Հանրապետության գյուղական շրջանները, թե սիրիահայությունը:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

*Ստորեւ՝ 2012 թ.-ի հանգանակությունների գումարները բացված՝ ըստ երկրների եւ ըստ Հիմնադրամի պաշտոնական հաղորդագրության տվյալների:*

| Երկիր | Գումար /ԱՄՆ դոլար/ |
|---|---|
| Հայաստան եւ ԼՂՀ | 2,500.000 |
| Ռուսաստան | 12,100.000 |
| Ֆրանսիա | 2,196.239 |
| Գերմանիա | 122,438 |
| Հոլանդիա | 58,600 |
| Շվեյցարիա | 31,800 |
| Բելգիա | 10,200 |
| Հունաստան | 38,200 |
| Իտալիա | 50,000 |
| ԱՄՆ Արեւելյան ափ | 600,000 |
| ԱՄՆ Արեւմտյան ափ | 1,500.000* (գումարները վերջնականացվում են) |
| Արգենտինա | 700,000 |
| Բրազիլիա | 100,000 |
| Կանադա/Տորոնտո | 500,000 |
| Կանադա/Մոնրեալ | 125,000 |
| Մեծ Բրիտանիա | 170,000 |
| Հնդկաստան | 600,000 |
| Իրան | 15,000 |
| Քուվեյթ | 5000 |
| Ընդամենը՝ | 21 422 477 |

# Ցավակցություն

Հայաստանի ավիաաշխատողների ճյուղային միության նախագահ
**Լեոնիդ Արաքսի Մուրադյանի**
մահվան կապակցությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահությունն ու անդամները խորապես ցավակցում են նրա ընտանիքին, հարազատներին եւ ընկերներին:

Հոգեհանգիստը՝ այսօր, նոյեմբերի 24-ին, ժամը 5-7-ը, Նորագավիթի Սբ Գեւորգ եկեղեցում:

Թաղումը՝ վաղը, նոյեմբերի 25-ին, ժամը 14-ին, նույն եկեղեցուց:

# Նոր առաջարկներ ՎիվաՍել-ՄՏՍ-ից՝ BlackBerry օգտագործողների համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ի բաժանորդները կարող են օգտվել նաեւ ընկերության կողմից BlackBerry ծառայությունների շարքում առաջարկվող BlackBerry... Social ծառայությունների փաթեթից:

Ծառայությունների նոր փաթեթը նախատեսված է բավարարելու Հայաստանում սոցիալական ցանցերից օգտվողների աճող թվի պահանջները: BlackBerry Social ծառայությունների փաթեթը BlackBerry... սմարթֆոն օգտագործողներին թույլ է տալիս կապի մեջ մնալ սոցիալական ցանցերում՝ անսահմանափակ հասանելիություն ապահովելով մի շարք հարթակներում, այդ թվում՝ Facebook...-ում, Twitter...-ում եւ Flickr-ում գտնվելիս: Այս փաթեթից օգտվողները կարող են իրենց ընկերների հետ կիսել կարգավիճակի թարմացումները, նշել նրանց նկարներում եւ շատ ավելին: Նաեւ կարելի է ակնթարթային հաղորդագրություններ փոխանակել BlackBerry... Messenger (BBM)-ի միջոցով, որն իր 60 մլն բաժանորդների շնորհիվ համարվում է աշխարհում բջջային ամենամեծ սոցիալական ցանցերից մեկը:

«Ուրախ ենք նոր՝ BlackBerry Social փաթեթն առաջարկել տեխնոլոգիաների սիրահար մեր բաժանորդներին: Վստահ ենք, որ այս փաթեթի եւ BlackBerry-ի մյուս ծառայությունների շնորհիվ բաժանորդները կկարողանան վայելել մշտապես կապի մեջ մնալու հնարավորությունը եւ գտնել անձնական կամ գործնական նպատակների համար անհրաժեշտ տեղեկությունները անգամ փողոցում քայլելիս»,- նշեց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն Հայաստանի տարածքում գործող 66 սպասարկման կենտրոններում առաջակում է BlackBerry սմարթֆոնների լայն տեսականի, որը կոչված է բավարարելու բաժանորդների՝ սոցիալական շփման օրեցօր աճող ամենատարբեր պահանջները:

BlackBerry, RIM, Research In Motion and related trademarks, names and logos are the property of Research In Motion Limited.

Մանրամասների համար այցելեք visit www.vivacell.am վեբ կամ pda.mts.am բջջային կայքերը, զանգահարեք «111» անվճար թեժ գծի հեռախոսահամարով, առցանց կապվեք մեր օպերատորներին՝ «111 առցանց» ծառայության միջոցով, կամ այցելեք ընկերության՝ Հայաստանի ամբողջ տարածքում գործող սպասարկման կենտրոններից մեկը:

# Մաքուր ու անաղարտ պահենք մայրենին

«Լույս» հրատարակչությունը վերջերս տպագրել է վաստակաշատ մանկավարժ, լեզվաբան **Խաչիկ Բադիկյանի «Ճիշտ խոսենք հայերեն»** խորագիրը կրող գիրքը՝ 200 էջ ծավալով: Գիրքը տպագրության է երաշխավորել Երեւանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը: Տպագրությունը հովանավորել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը:

Հայոց պետական գրական լեզուն՝ ոսկեղենիկ հայերենը, որ համայն հայության ազգային ինքնության ու ինքնագիտակցության, լինելիության, միասնության ու հավերժության ամենազորեղ զենքն ու զրահն է, մաքուր ու անաղարտ պահելը, պահպանելը, շարունակաբար հարստացնելն ու զարգացնելը կազմում են գրախոսվող աշխատության բովանդակության առանցքը: Այս հիմնադրույթից ելնելով՝ Խ. Բադիկյանը գրքում հանգամանորեն քննարկել է արդի գրական հայերենի արտասանական, ուղղախոսական, բառական, քերականական, ոճական օրինաչափությունները եւ փաստարկված ներկայացրել թույլ տրվող լեզվական աղաղակող մեղանչումները, աղավաղումները, որոնք հաճախակի տեղ են գտնում պետական շատ պաշտոնյաների ելույթներում, ասուլիսներում, ռադիոհեռուստատեսային հաղորդումներում, թերթերում ու ամսագրերում, տպագրվող գրքերում, ցուցանակներում, ազդագրերում եւ այլուրեք:

Գրախոսվող աշխատությունը դրանք վերացնելու եւ հայերենը (գրավոր ու բանավոր) անաղարտ պահելու նպատակ է հետապնդում:

Պատասխանելով «Ի՞նչ է լեզվական նորման» հարցին՝ Խ. Բադիկյանը մեջբերում է մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի բնութագրությունը. «Լեզվական նորման հանրության կողմից (նաեւ ավանդությամբ) ընդունելություն գտած, օրինականացված լեզվական (արտասանական, հնչյունային, բառային, դարձվածային, քերականական ու ոճական) միջոցների ու ձեւերի ճշգրիտ ու կանոնակարգված գործածությունն է...

Գրական նորման նշված միջոցների առավել կարգավորված եւ օրինակելի գործածման կանոնների ամբողջությունն է (էջ 14, ընդգծումը իմն է. Ռ. Դ.): Եվ ապա՝ «Լեզվական նորման քարացած կատեգորիա չէ. այն ժամանակի ընթացքում փոփոխվում, կատարելագործվում է հաղորդակցման պահանջներն առավելագույնս բավարարելու միտումով (էջ 14):

Ելնելով Հր. Աճառյանի գիտական ճշգրիտ բնորոշումից՝ Խ. Բադիկյանը գրքում մանրամասնորեն վերլուծում ու բնութագրում է (իհարկե, բնորոշ օրինակների զուգակցմամբ) արտասանական նորման՝ իր բաղադրիչներով (արտաբերվող կետադրական նշաններ, բառային շեշտ, տրամաբանական շեշտ, հնչերանգ, ձայնավորների, բաղաձայնների, արտասանություն եւ այլն): Մանրամասնությունները տե՛ս էջեր 14-41-ում:

Այնուհետեւ քննարկում է բառական նորման եւ հանգամանորեն անդրադառնում բառական նորմայի արտասանության ու գրության խախտման դեպքերին՝ բերելով բազմաթիվ օրինակներ, փաստեր: Հիմնավորված անդրադառնում է նաեւ բառիմաստային սխալներին, երբ, օրինակ, հակամետ, տարկետում, վարկաբեկել, ամբարիշտ, ստահոդ եւ այլ բառեր գործածում են ոչ տեղին եւ ոչ ճիշտ ընկալումով ու սխալ ստուգաբանությամբ:

Գրախոսվող աշխատության մեջ առանձին քննության նյութ են




դարձել հարանուն բառերն ու նրանց իմաստային տարբերությունները (օրինակ՝ ախտ-աղտ, ամուլ-ամոլ, ապար-ապառ, ալոճ-ալոջ, այգաբաց-այգեբաց եւ այլն): Ճիշտ կողմնորոշվելու համար գրքում ներկայացվել է հարանուն բառերի համառոտ բառացանկը (տե՛ս էջեր 50-56):

Անդրադառնալով փոխառությունների եւ օտարաբանությունների հարցերին՝ հեղինակը ճշտորեն նշում է, որ աշխարհում բոլոր լեզուներն էլ այլ լեզուներից անհրաժեշտաբար կատարել եւ կատարում են փոխառություններ՝ պայմանավորված ժողովուրդների հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքի փոփոխություններով, ինչպես նաեւ գիտության, տեխնիկայի, արվեստի, սպորտի զարգացումներով եւ այլ գործոններով: Փոխառությունները (եթե փոխառու լեզուն չունի համարժեքները) հարստացնում են տվյալ լեզվի բառապաշարը եւ խիստ անհրաժեշտ են: Իսկ օտարաբանությունները ուրիշ լեզուներից վերցրած եւ փոխառու լեզվում իրենց համարժեքներն ունեցած բառերն ու արտահայտություններն են, որոնց գործածության դեմ պիտի պայքարել: Օրինակ՝ ինչի նման է, երբ թերթերից շատերը օգտագործում են մեբել, պրեստիժ, էլիտար, վիտրաժ, պրոցես, սյուրպրիզ, օրկեստր, իլյուզիա, իմունիտետ, կոդ, ինտելեկտ եւ այլ օտար բառերը: Եվ ո՛չ միայն թերթերը, շատերի բանավոր ու գրավոր խոսքում ականջ են ծակում այլեւայլ օտար բառերն այն դեպքում, երբ դրանց համարժեքները կան հայերենում:

Բանավոր ու գրավոր խոսքը հեղեղված է նաեւ օտարաբան արտահայտություններով, օրինակ՝ «հարցը կայանում է նրանում» (փոխանակ՝ հարցն այն է), «ինչպե՞ս է անունդ» (փոխանակ՝ ի՞նչ է անունդ), «նա հանդիսանում է բժիշկ» (փոխանակ՝ նա բժիշկ է) եւ այլն:

Գրքի 62-103 էջերում Խ. Բադիկյանը հանգամանորեն քննարկում ու պարզաբանում է քերականական նորմայի խնդիրները, վկայաբերում է ձեւաբանական նորմաների խախտումները, համաձայնության, խնդրառության, շարադասության, ոճական սխալներն ու անկանոնությունները: Քերականական, ոճական նորմաները չպահպանելու վերաբերյալ բերում է անհրաժեշտ սխալ օրինակներ՝ միաժամանակ ներկայացնելով դրանց ճիշտ ձեւերը:

Գրքի վերջում բերված է հայերենում հաճախ գործածվող օտար բառերի բացատրական բառարանը՝ հիմք ընդունելով Ալ. Մարգարյանի, Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բացատրական բառարան» (2004 թ.), Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան» (2011 թ.), Ա. Հայրապետյանի «Օտար բառերի առձեռն բառարան» (2011 թ.) աշխատությունները (տե՛ս էջեր 105-194):

Խ. Բադիկյանի գիրքն ունի ընդգծված ուսուցողական գործնական նպատակ: Այն մեծ չափով օգտակար կարող է լինել պետական պաշտոնյաների, պատգամավորների, հաղորդավարների, դասախոսների, ուսուցիչների, դերասանների, ուսանողների, աշակերտների եւ հայերենի անաղարտությամբ հետաքրքրվող բոլոր մարդկանց համար:

Մի քանի դիտողություն: Գրքում կան բառերի անտեղի կրկնություններ. օրինակ՝ «Շարունակելով իր միտքը՝ մեծ լեզվաշինարարը շատ պատկերավոր միտք է արտահայտում...» (էջ 19), «Բայց կարեւոր խնդիր է նաեւ այդ հարուստ բառապաշարից վարպետորեն ու ճաշակով օգտվելու հարցը» (էջ 42): Կան համաձայնության սխալ կիրառություններ. «...այնքան հարուստ է նրա միտքն ու խոսքը» (էջ 43), «... մի մասն էլ խոսում են պարզ ու հասկանալի լեզվով...» (էջ 93) եւ այլն: «Հայերենում քիչ չէ նաեւ գրափոխության հետեւանքով սխալ արտաբերվող բառերի թիվը...» (էջ 47), «Մայրենի լեզվի քերականություն չիմանալու կամ վատ իմանալու հետեւանքով են խախտվում քերականական բազմաթիվ նորմաներ...» (էջ 62): Հետեւանքով բառաձեւի փոխարեն պետք էր գործածել պատճառով բառաձեւը, քանի որ պատճառից է ստեղծվում, գոյանում հետեւանքը: Կան նաեւ այլ բնույթի մասնակի շեղումներ, որոնք, սակայն, որակ չեն կազմում:

Գիրքը լուրջ հետազոտության, հմուտ վերլուծության արդյունք է: Ընդհանուր առմամբ անժխտելի է գրքի օգտակարությունը, եւ խրախուսելի է նրա տպագրությունը:

ՌՈՍՏԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ

# Արցախի վարչապետը գիտի էներգետիկայի արժեքը

*1-ին էջից*

**ՀԷԿ-երում հիմնական ներդնողների 80 տոկոսը արտերկրից են, կան խոշոր ներդնողներ: Դա առաջին ծրագիրն է, որն իրականացվել է բաց բաժնետիրական ընկերության եղանակով, բաժնետոմսերի թողարկմամբ եւ մինչեւ 17 միլիոն դոլարի տեղաբաշխում է եղել: Խոշոր բաժնետերեր են Ջոզեֆ Ուղուլյանը (Հայկական բարեգործական ընդհանուր միության խորհրդի անդամ, ծնունդով ֆրանսիացի, սակայն այժմ ավելի շատ ԱՄՆ-ում է ապրում, նա ամենախոշոր ներդնողներից մեկն է) եւ Վարդան Սրմաքեշը (Շվեյցարիայի «Ֆրանկմյուլլեր» ժամացույցների գործարանի սեփականատերը). «Սա հեռանկար ապահովող ճյուղ է, որովհետեւ մեր պոտենցիալը շատ մեծ է՝ մինչեւ 7-8 հարյուր միլիոն կիլովատ արտադրության պոտենցիալ կա, որին ծրագրված է հասնել 2020-22 թվականներին. «Մենք կարող ենք անընդհատ աճող մեր ներքին պահանջները բավարարել հիդրոկայանների կառուցման շնորհիվ»:**

**Եթե նախկինում էլեկտրաէներգիան ներկրվում էր Հայաստանից, այսօր, փաստորեն, Արցախն ինքնուրույն ապահովում է ինքնիրեն, իսկ ներդրումային ծրագրերն այս ոլորտում շարունակական են:**

## Ծավալվող հանքարդյունաբերություն

**Հանքարդյունաբերության բնագավառը խորհրդային Արցախում ներկայացված չէր ընդհանրապես, թեեւ Ղարաբաղում կան մեծ պաշարներ: Գուցե՝ բարեբախտաբար, քանի որ այդ պաշարներն այսօր մնացել են, ադրբեջանցիք չեն խժռել, եւ այսօր ազատ Արցախն է տնօրինում իր բնական ռեսուրսները՝ հիմնականում ամենաշատը պղինձ, ոսկի, քարածուխ, գունավոր եւ ոչ գունավոր, թանկարժեք եւ ոչ թանկարժեք տարբեր մետաղական եւ ոչ մետաղական այլ հարստություն:**

**Այսօր սկսված է քարածխի արդյունահանում, որ առաջին փուլում մատակարարվելու է Երեւանի ջերմաէլեկտրակայանին, որպես հումք, իսկ հետո նաեւ Արցախի տնտեսությանը: Պղնձի հանքերը որոշ տեղերում սկսել են շահագործել, որոշ տեղերում ուսումնասիրություններ են ընթանում: Հետաքրքրված են թե՛ սփյուռքահայ, թե՛ օտարերկրյա քաղաքացիներ, տարբեր օտարերկրյա կազմակերպություններ մասնակցում են նախագծերին, որոնք լայն թափ են ստանում: Խոշոր ընկերությունը «Բեյզմետալս» ընկերությունն է, որը շահագործում է Դրմբոնի ոսկու հանքը, այսօր արդեն Ծաղկաշենի պղնձի հանքն է սկսել շահագործել: Մասնակից են հիմնականում օտարերկրյա քաղաքացիներ, նույն Վարդան Սրմաքեշը, Հայաստանից «Մանեքս-Վալեքսը» (որը «Բեյզմետալսի» հետ նույն խմբի մեջ է մտնում): Հանքը պետական սեփականություն է, պետությունը հանձնել է շահագործման, դրա դիմաց վճարում են բնապահպանման, բնօգտագործման վճարներ, հարկեր: Նոր ինվեստորներ եւս կան:**

**Հայաստանում պետությանը քննադատում են, որ հանքարդյունաբերության մեջ ստվեր կա, որ պետության տրվող հարկերն այս ոլորտից քիչ են, ինչպե՞ս է այս հարցը Արցախում, հետաքրքրվում ենք ԼՂՀ վարչապետից. «Մենք էլ ունեինք այդ խնդիրը եւ վերանայում ենք ընդհանուր հարկային քաղաքականությունը, որի արդյունքում հանքերի շահագործումից ավելի մեծ հարկեր են վճարվելու պետական բյուջե»: Ներդնողին չե՞ք խրտնեցնի, հարցնում ենք. «Ոչ, այնպիսի արտոնյալ պայմաններ ենք ստեղծում, որ թե՛ ներդնողի համար է բարեհարմար՝ շահութաբերության նորմալ աստիճան ապահովելով, թե՛ պետությունը կշահի»:**



**Մի քանի ոսկու եւ մի քանի պղնձի հանքեր՝ Քաշաթաղի, Շահումյանի, Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու շրջաններում կան, մի մասն ուսումնասիրվում է, մի մասը սկսել է շահագործվել:**

## ՀՆԱ-ի 10 տոկոս աճ ԼՂՀ-ում

**Ընդհանուր տնտեսության պատկերը ներկայացնելով՝ վարչապետ Ա. Հարությունյանը նշեց, որ վերջին 5 տարիներին ապահովվել է ՀՆԱ-ի 10 տոկոս տարեկան իրական աճ, դա ոչ միայն տարածաշրջանում, այլեւ ամբողջ աշխարհում վերջին 5 տարվա մեջ ամենաբարձր տնտեսական ցուցանիշներից է համարվում. «Առաջին հերթին Հայաստանի օգնության շնորհիվ՝ բավական մեծ աջակցություն կա տնտեսության մեջ ներդրումների տեսքով, տարբեր այլ գործիքների կիրառմամբ, բանկային համակարգի մասնակցությամբ: Բանկերը մեծ մասնակցություն ունեն Արցախի տնտեսության զարգացման առումով՝ վարկավորում են տնտեսությունը, ներդրումներ են իրականացնում, ներդրումները բերում են տնտեսական աճի: Հայաստանի մի շարք բանկեր ներկայացված են Արցախում, ունեն մասնաճյուղեր»:**

**Արցախի մյուս ամենախոշոր ճյուղը գյուղատնտեսությունն է, այս ոլորտում եւս ներդրումներ կան, եւ դրանց ներգրավումը շարունակվում է. «Խնդիրը պարենային անվտանգության հարցի լուծումն է, նաեւ Հայաստանի պարենային անվտանգության հարցի լուծմանն ենք ուզում մասնակցել՝ տեղական արտադրության շնորհիվ կրճատելով ներկրման ծավալները: Հաջողություններ արձանագրվել են, ու այդպես շարունակելու ենք ոլորտում»:**

**Արցախն արտադրում է ցորեն, եգիպտացորեն, մրգեր, բանջարաբոստանային տարբեր մշակաբույսեր: Հացահատիկային մշակաբույսերն են դոմինանտը, գումարվում է մնացածը:**

## Արցախում շինարարության բում է

**Շինարարության տեմպերը շատ մեծ են, 2011 թվականին 2007 թվականի համեմատ կրկնապատկվել են շինարարության ծավալները՝ պետական, ոչ պետական եւ բարեգործական եւ տնտեսական ծրագրերի շնորհիվ: Պետական բյուջեով նույնպես ավելացել է շինարարության ծավալը: 40 տոկոս պետական շինարարություն կա՝ դպրոցներ, մանկապարտեզներ, պետական կառույցներ, մշակութային օջախներ, 60 տոկոսը մնացածն է: Բացի Հայաստանի ռեսուրսներից՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամն է մասնակցում, սփյուռքի մեր հայրենակիցները՝ դպրոցաշինություն, մանկապարտեզաշինության մեջ են ներգրավված:**

**Վերջին երկու տարում պետբյուջեի միջոցներով սարքվեց Արցախ թաղամասը՝ զոհվածների եւ սպաների ընտանիքներին տեղավորեցին այնտեղ՝ հիփոթեքային ծրագրերի շրջանակում 225 բնակարան տրամադրելով: Հիփոթեքային վարկը 15 տարի ժամկետով, 6 տոկոս տոկոսադրույքով է, դա եւս մատչելի չէ բոլորի համար՝ բնակչության միջին եկամուտների առումով: Իսկ 6 տոկոս պետության շնորհիվ է դարձել, բանկերը տրամադրում են 12-14 տոկոսով, տոկոսների տարբերությունը վճարում է պետությունը**

# Լուսանկարը հաստատում է գերմանացիների կապը 1915-ի ցեղասպանության հետ

***Նորահայտ մի լուսանկար ցույց է տալիս կայզերական սպաների թուրքական վայրագությունը ապացուցող տեսարանի առաջ, գրում է «Ինդիփենդենտ» թերթի Միջին Արեւելքի մշտական թղթակից Ռոբերտ Ֆիսքը: Ստորեւ նրա հոդվածը թարգմանաբար:***

Ցարդ անտիպ մի լուսանկար, որ հավանաբար կատարվել է 1915-ին, ցույց է տալիս ավազի վրա սփռված մարդկային գանգեր՝ մնացորդները Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան թուրքերի կողմից սպանված հայերի: Գանգերի հետեւում լուսանկարվելու համար հատուկ կեցվածք են ընդունել երեք թուրք սպաներ բարձր, փափուկ գլխարկներով եւ աջ կողմում՝ մի փոքր հեռվում մի քուրդ: Մյուս երկուսը գերմանացիներ են կայզեր Ռայխ Շիրի՝ գերմանական բանակի զինվորական տափակ գլխարկներով, գոտիներով եւ բաճկոններով: Դա գազանությունը պատկերող լուսանկար է նման այն լուսանկարներին, որ նացիստներն էին հանում քառորդ դար անց իրենց զինվորներին կանգնեցնելով ողջակիզման ենթարկված հրեա զոհերի առաջ:

Գերմանացիները մասնակցե՞լ են 1915-ին քրիստոնյա հայերի զանգվածային կոտորածներին: Սա իր տեսակի մեջ միակ լուսանկարը չէ, բայց մինչ օրս գերմանացիները մեծ մասամբ իրենց պատասխանատու չեն համարում մարդկության դեմ գործված 20-րդ դարի առաջին ողջակիզման համար: Առաջին աշխարհամարտի ժամանակ թուրքական նահանգներում գործող գերմանացի դիվանագետները սոսկումով եւ դատապարտելով են արձանագրել բռնի տեղահանություններն ու զանգվածային սպանությունները 1,5 միլիոն հայ քաղաքացիների՝ թուրք ոճրագործներին «տականք» անվանելով: Գերմանացի խորհրդարանականները Ռայխստագում դատապարտել են կոտորածները:

Գերմանական բանակի սանիտարական կազմի անդամ Արմին Վեգները, վտանգելով իր կյանքը, վշտալի լուսանկարներ է արել ցեղասպանության ժամանակ մահացած եւ մահացող հայերի: 1933-ին գերմանացի հրեաների անունից դիմել է Հիտլերին, հարցնելով նրան, թե ի՞նչ է պատուհասելու Գերմանիային, եթե նա շարունակի իր հետապնդումները: Բանտարկվել է եւ կտտանքների ենթարկվել գեստապոյի կողմից: Այսօր նա իր պատվավոր տեղն է զբաղեցնում Իսրայելի «Յադ Վաշեմ» հրեական ողջակիզման թանգարանում եւ Երեւանի Հայոց ցեղասպանության թանգարանում, որտեղ հանգչում է նրա աճյունի մի մասը:



Հայկական այս հաստատությունը եւ նրա ժրաջան տնօրեն Հայկ Դեմոյանն են հայտնաբերել այս նորագույն լուսանկարը: Այն այլ նմանօրինակ լուսանկարների հետ կցված է եղել մի վերապրողի երկար ժամանակ կորած համարվող վկայությանը: Բոլոր լուսանկարներն էլ հանված են Երզնկա կոչվող տեղանքում, քաղաք, որի բնակչության մեծ մասը սպանվեց Էրզրումի ճանապարհին: Էրզինջանը կարճ ժամանակ գրավվեց (1916-ի հունիսին) թուրքական 3-րդ բանակի ձեռքից ռուս գեներալ Նիկոլայ Յուդենիչի կողմից, եւ հայերը, որոնք կռվում էին ռուսական կողմից, կարողացան լուսանկարչական եւ փաստագրական հարուստ վկայություններ հավաքել նախորդ տարի իրենց պատուհասած ցեղասպանության վերաբերյալ: Ռուսական թերթերը (Երեւանի թանգարանի արխիվներում) տպագրեցին այդ լուսանկարները: Հետո ռուսները ստիպված եղան նահանջել:

Վեգներին հաջողվեց նաեւ տեսարաններ լուսանկարել տեղահանության վերջին փուլի վերաբերյալ այն վայրերում, որ այսօր Հյուսիսային Սիրիայի սահմաններում են, որտեղ տասնյակհազարավոր հայեր մահացան ճամբարներում խոլերայից եւ արնալուծից: Երեւանի (Ցեղասպանության) թանգարանը վերջերս Ռակկայում եւ Ռաս էլ Այնում, հավանաբար վերապրողների կողմից գաղտնաբար հանված, մեծ թվով լուսանկարներ է ձեռք բերել: Դրանցից մեկի տակ հայերենով գրված է «Հայ գաղթականների քարավանը - Ռաս էլ Այն»: Լուսանկարը, որտեղ վրաններ եւ գաղթականներ են պատկերված, հավանաբար հանված է ճամբարին նայող մի պատշգամբից:

Մեկ ուրիշի վրա գերմաներեն գրված է «Հայկական ճամբար Ռակկայում»: Լուսանկարը հավանաբար արված է Վեգների զինվորական գործընկերներից մեկի կողմից եւ պատկերում է գորշ վրանների առաջ կանգնած մի խումբ տղամարդկանց ու կանանց: Դժբախտաբար բոլոր այն հայերը, որոնք 1915-ի տարագրությանը դիմացել էին, սպանվեցին հաջորդ տարի, երբ օսմանցի թուրքերը հասան նրանց հետեւից:

Գերմանացի որոշ հյուպատոսներ արտահայտվեցին Թուրքիայի դեմ: Ամերիկահայ գրող Պիտեր Բալաքյանը նկարագրել է, թե ինչպես գերմանացի բողոքականների մի հայց՝ ուղղված Բեռլին, նշում էր, որ Անատոլիայի բոլոր վիլայեթներից եւ Կիլիկիայից... հայերի տեղահանությունը հրահանգված է եղել: Քանի որ «Դոյչե բանկն» էր ֆինանսավորում Բաղդադ-Բեռլին երկաթգծի շահագործումը, բանկի աշխատակիցները սարսափով են լցվել՝ տեսնելով, որ վագոններով հայ տղամարդկանց տեղափոխում են դեպի մահ:

Բալաքյանը եւ այլ պատմաբաններ գրել են նաեւ, թե ինչպես հայկական ողջակիզման գերմանացի ականատեսներ հետագայում դեր են ունեցել նացիստական վարչակարգում: Կոնստանտին Ֆրեյհեր ֆոն Նոյրաթն, օրինակ, 1915-ին կցված էր թուրքական 4-րդ բանակին եւ հրահանգված էր հետեւել հայերի դեմ իրականացվող «գործողություններին»: Նա հետագայում դարձավ Հիտլերի արտգործնախարարը եւ «Բոհեմիայի եւ Մորավիայի պրոտեկտորը» Չեխոսլովակիայում (Ռեյնհարդ Հեյդրիխի իշխանության օրերին): Մեկ ուրիշը՝ Ֆրիդրիխ Վերներ ֆոն դեր Շուլենբերգը 1915-16 թվերին հյուպատոս էր Էրզրումում, իսկ հետագայում դարձավ դեսպան Մոսկվայում: Ռուդոլֆ Հեսը գերմանական բանակի կապիտան էր Թուրքիայում 1916-ին: 1940-43 թվականներին նա Օսվենցիմի ճամբարի պարետն էր: Իսկ հետագայում համակենտրոնացման ճամբարների ՍՍ-ի գլխավոր շտաբի վերակացուի տեղակալ: 1947-ին նրան մեղավոր ճանաչեցին եւ կախաղան բարձրացրին Օսվենցիմում: Սակայն երեւի մենք երբեք էլ չենք իմանա այդքան անփույթ, անտարբեր տեսքով՝ երզնկացիների գանգերի առաջ կանգնած գերմանացի երկու սպաների ինքնությունը:

**Բեյրութ, Լիբանան**

# Մեքսիկայի նախագահն ուզում է փոխել երկրի անունը



Մեքսիկայի նախագահ Ֆելիպե Կալդերոնն առաջարկել է կրճատել երկրի պաշտոնական անվանումը՝ հանելով «Միացյալ Նահանգներ» բառերը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ նախագահը համապատասխան օրինագիծ է ուղարկել խորհրդարան:

«Ժամանակն է, որ մեքսիկացիներն իրենց հայրենիքին վերադարձնեն գեղեցիկ ու պարզ անվանումը՝ Մեքսիկա», հայտարարել է նախագահը, ընդգծելով, որ երկրի անվանումը ի հայտ է եկել տասնիններորդ դարում, «նմանակելով ուրիշ պետությունների»: Երկիրը Մեքսիկայի Միացյալ Նահանգներ սկսեց կոչվել 1824-ին՝ Իսպանիայից անկախանալուց հետո:

Պաշտոնական անվանումը հանդիպում է առավելապես փաստաթղթերի, ինչպես նաեւ թղթադրամների վրա: Կալդերոնը հիշեցրել է, որ այդ անվանումը փաստորեն չի օգտագործվում առօրյա կյանքում:

Պահպանողական բնույթի «Ազգային գործողության կուսակցությունը» ներկայացնող Ֆելիպե Կալդերոնը իր պաշտոնը կթողնի դեկտեմբերի 1-ին՝ նորընտիր նախագահ Էնրիկե Պենյա Նյետոյի պաշտոնակալության օրը: Վերջինս «Ինստիտուցիոն-հեղափոխական կուսակցության» ներկայացուցիչ է:

# Սաուդի կանանց հետեւում են sms-ներով



Սաուդյան Արաբիայի կանայք իրավունք չունեն ճամփորդելու առանց ամուսինների կամ խնամակալների համաձայնության: Երկրում սկսել է գործել կարճ հաղորդագրությունների՝ sms-ների ուղարկման համակարգ. դրանք տղամարդուն հայտնում են, որ կինը (դուստր, քույրը) հատում է սահմանը:

Հաղորդագրությունը տեղ է հասնում, հենց որ կինը անձնագրային ստուգում է անցնում օդանավակայանում, նշում է «Ալ Արաբիա» հեռուստաալիքը:

Սաուդցի կանայք չեն կարող երկրից դուրս գալ առանց ամուսնու կամ խնամակալի գրավոր համաձայնության՝ «դեղին քարտի»: Sms-ների համակարգը կանանց վերահսկման նոր միջոց է դարձել:

Նորամուծության հակառակորդները sms վերահսկողությունը համարում են մարդու իրավունքների խախտում: Նրանք իշխանություններին առաջարկում են օգտագործել կանանց մաշկի մեջ դրվող միկրոչիպեր կամ էլեկտրոնային ապարանջաններ, որոնք նման են դատարանի վճռով իրավախախտի դաստակին ամրացվող ապարանջանին:

ԵԳԻՊՏՈՍ

# Դատարանը կքննի Մուրսիի պաշտոնանկության հնարավորությունը

## *Բարադեյ. «Նա դարձել է նոր փարավոն»*

Եգիպտոսի Սահմանադրական դատարանը կքննի երկրի նախագահ Մուհամմեդ Մուրսիի պաշտոնանկության հնարավորության հարցը: Մուրսին ամբաստանվում է երդմնազանցության եւ երկրի սահմանադրական հիմքերի խարխլման մեջ:

«Այն բանից հետո, երբ նա ոտնահարեց օրենքներն ու սահմանադրությունը, դատավորները կօգտվեն պետության ղեկավարին հեռացնելու իրենց իրավունքից», հայտարարել է դատարանի ներկայացուցիչը ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին:

Նոյեմբերի 22-ին Մուրսին հաստատել է Եգիպտոսի սահմանադրության նոր ուղղումները, որոնք աննախադեպ իրավասություններ են տալիս պետության ղեկավարին:

«Պետության ղեկավարը կարող է ընդունել ամեն տեսակ հրամանագրեր, որոնք անհրաժեշտ են հեղափոխության պաշտպանության համար: Նրա ստորագրած սահմանադրական հռչակագրերը, օրենքները եւ որոշումները վերջնական են եւ գանգատարկման ենթակա չեն», լրագրողներին ասել է նախագահի մամլո քարտուղար **Յասիր Ալին**:

Ընդդիմության առաջնորդներից մեկը՝ ՄԱԳԱՏԷ-ի նախկին ղեկավար **Մուհամմեդ էլ Բարադեյը** նշել է, որ նոր կարգադրությունները պետության ղեկավարին դնում են օրենքից վեր: «Մուրսին բռնաշիրել է իշխանությունը՝ դառնալով նոր փարավոն: Հեղափոխությանը հասցված այդ հարվածը Եգիպտոսի համար կունենա անչափ ողբալի հետեւանքներ», ընդգծել է Բարադեյը:

Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ Եգիպտոսի ընդդիմության ներկայացուցիչները բնակչությանը կոչ են արել բողոքի զանգվածային ցույցերով հանդես գալ Մուրսիի դեմ: Ընդդիմությունը նախագահին մեղադրում է պետական հեղաշրջման մեջ: Մուրսիի սահմանադրական հռչակագրում մասնավորապես հայտնվել է դրույթ, ըստ որի վերսկսվում է 2011-ին նախագահ Հոսնի Մուբարաքի տապալմանը հանգեցրած ցույցերի մասնակիցների դեմ իշխանությունների գործած հանցանքների հետաքննությունը:

Ընդդիմության ներկայացուցիչների սահմանադրական հռչակագրումը Մուրսիի իրավասություններն ընդլայնող փոփոխությունները համարում են Մուբարաքին տապալած ժողովրդավարական շարժմանն սպառնացող վտանգ, որը երկրում էլ ավելի կուժեղացնի իսլամիստների ազդեցությունը:

Մուհամմեդ Մուրսին հաղթեց Մուբարաքի տապալումից հետո անցկացված առաջին նախագահական ընտրություններում: 2012-ի ամռանն անցկացված ընտրություններում Մուրսին «Մուսուլման եղբայրներ» շարժման թեկնածուն էր: Օգոստոսին նա սահմանադրական հռչակագրում կատարեց փոփոխություններ, որոնցով իշխանությունից հեռացրեց Մուբարաքից հետո երկիրը կառավարած Բարձրագույն զինվորական խորհրդին:

# Համազգայինի թատրոն

## *«Գրանդ Քենդի» ընկերությունը լուծեց «Հացի խնդիրը»*

Պերճ Պռոշյանի «Հացի խնդիրը» արդեն բեմում է:

Երեկ տեղի ունեցավ ներկայացման պրեմիերան, որի բեմադրող ռեժիսորն է Վիգեն Ստեփանյանը, կոմպոզիտորը՝ Մարտին Վարդազարյանը, բեմադրող նկարիչը՝ Դավիթ Մինասյանը: Իսկ ներկայացման նշանաբանն է. «Ճշմարիտ է այն խոսքը, թե մարդու գլխավոր դատավորն յուր խիղճն է. նրանից արդար եւ ոչ մի դատաստան անող չի եղել ի սկզբանե անտի եւ չի էլ լինելու»:



Համազգային թատրոնի տնօրեն **Վարդան Մկրտչյանը** երեկ **«Ազգի»** հետ զրույցում ընդգծեց, որ ներկայացման գաղափարը «Գրանդ Քենդի» ընկերության նախագահ Կարեն Վարդանյանինն է. «Կ. Վարդանյանը Համազգային թատրոնի 20-ամյակի կապակցությամբ մեզ նվեր մատուցեց՝ ասելով, որ բեմադրենք ներկայացում՝ չմտածելով նյութականի մասին, ինչը մեզ համար ուղղակի հրաշք էր: Սակայն Կ. Վարդանյանի խնդրանքն էր, որ այն լինի հայ դասականներից ինչ-որ մեկի ստեղծագործությունը, եւ գործը գլխավորի Սոս Սարգսյանը: Երկարատեւ փնտրտուքից հետո Կ.Վարդանյանի առաջարկությամբ որոշեցինք բեմադրել Պերճ Պռոշյանի «Հացի խնդիրը»: «Ներկայացման մեջ ունենք որոշ կրճատումներ բնագրից, մենք ավելի վառ ենք ներկայացրել այսօր առկա վտանգները: Անկախ ամեն ինչից մենք ունենք նոր սերունդ, որին հավատում ենք եւ սահման, մենք վառոդների վրա ենք ապրում, կա վախ, սակայն միեւնույն ժամանակ կա սերունդ, որը երգում է. «Բարի լույս, աստղը դեռ պիտի երեւա ու աղոթարանի դռները պետք է բացվեն»: Ստեղծագործական խումբը ներկայացման վրա աշխատել է 2-3 ամիս:

Ըստ բեմադրող ռեժիսոր **Վիգեն Ստեփանյանի**, բեմադրությունը շատ արդիական է ստացվել. «Ներկայացման միջոցով ես իմ բողոքի ձայնն եմ բարձրացնում ընդդեմ կաշառակերության եւ այն մարդկանց, որոնք արդարացնում են իրենց վատ արարքները՝ ասելով, որ սոված ենք, այդ իսկ պատճառով էլ դիմում ենք կաշառակերության»:

Սիմոնի կերպարը մարմնավորող **Արման Նավասարդյանն** «**Ազգի**» հետ զրույցում ասաց, որ առաջին անգամ չէ, որ աշխատում է Վիգեն Ստեփանյանի հետ: Ըստ դերասանի, ներկայացումն ստացված է. «Մենք միասին ստեղծել ենք մի նոր տեսակ, մարդ, երեխա, որը դեռ պիտի քայլի, ընկնի, վեր կենա ու Աստված տա հասնի վազքին, որի մասին բոլորն են երազում»:

Ըստ Արմանի, ներկայացումը կունենա մեծ հաջողություն, քանի որ մեր թատրոնները վերջին շրջանում քիչ են անդրադառնում հայ դասականների ստեղծագործություններին. «Ներկայացման մեջ կան հսկայական մասսայական տեսարաններ, որոնց վրա աշխատելը շատ դժվար էր: Շնորհակալ եմ «Գրանդ Քենդի» ընկերությանը, որը ընձեռեց այս հնարավորությունը, որ մեր թատրոնում ստեղծվի նմանատիպ ներկայացում: Այսպիսի մասշտաբային ներկայացումներ ընդհանրապես թատրոնները խուսափում են անել, սակայն մենք գնացինք այդ ռիսկին»:

Իսկ Հեղնարի կերպարը մարմնավորող **Տաթեւիկ Ղազարյանն** ասաց, որ չէր ցանկանա այս կերպարի հետ նման բաներ կատարվեին. «Ներկայացումը վաղուց ենք փորձում, շատ բուռն էր համագործակցությունը ռեժիսորի հետ, ինչը շատ հետաքրքրական եւ հաճելի էր: Այն դեռ եփելու կարիք ունի, դեռ հում բաներ կան ներկայացման մեջ, սակայն ժամանակի ընթացքում ամեն ինչ կընկնի իր տեղը»: Ըստ Տաթեւի այս ներկայացումը շատ խոր ազդեցություն կունենա հանդիսականի վրա, քանի որ հայկական ազգային միտք է, որի պակասը հանրությունը շատ ունի:

Պիեսը 3 գործողությամբ է, որը կտեւի մոտավորապես 3 ժամ, իսկ արդյոք հայ հանդիսականը կկարողանա՞ երեք ժամ հետեւել ներկայացմանը, Տաթեւիկ Ղազարյանն ասաց. «Մեծ բան կտանի հանդիսատեսը այս ներկայացումից, բոլորը հետ կնայեն, կմտածեն, արդյոք ճի՞շտ են ապրում, արդյոք իրենց խիղճը թո՞ւյլ է տալիս, որ այս կամ այն բանը անի: Մեր հանդիսատեսը պիտի սովորի, որ թատրոն գնում են երեկո անցկացնելու, ոչ թե մեկ ժամ ծիծաղելու համար»:

Ուրախալի է, որ ներկայացման հանդեպ հետաքրքրությունը շատ մեծ է, քանի որ ներկայացումների բոլոր տոմսերը սպառվել են, ինչպես «**Ազգին**» հաղորդեց Համազգային թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը:

Վաստառողջ լինելով հանդերձ ներկայացմանը ներկա էր **Սոս Սարգսյանը**, որը «**Ազգի**» հետ զրույցում ասաց. «Այս աշխատանքը սկսելիս մեծ ակնկալիքներ, հույսեր ունեի, որոնք կարծես թե արդարացվեցին: Առաջին ներկայացումն է, դեռ հուզված են դերասանները, սակայն հիմքը դրված է»: Վարպետը ավելացրեց, որ բոլոր դերասաններն իր համար անսպասելի կերպարներ են ստեղծել եւ սա վկայությունն է, որ մեր դերասանները աճում են, վարպետություն են ձեռք բերում. «Ունենք դերասաններ, որոնք մեծ դերասաններ դառնալու շեմին են կանգնած»:

Հատկանշական է, որ բարերար Կարեն Վարդանյանն առաջին անգամ չէ, որ նման բարեգործական ծրագրերով է հանդես գալիս: Ուրախալի է, որ դեռ կան գործարարներ, որոնք բացի ռեստորաններ, հյուրանոցներ եւ նմանատիպ այլ բիզնեսներ ստեղծելուց բացի, այս պարագայում, տարբեր արտադրություններ եւ արտադրատեսակներ ստեղծելուց, գումար են հատկացնում նաեւ մշակույթի զարգացմանը, պահպանմանը: Հուսանք, որ «Քրանդ Քենդի» ընկերության նախագահի օրինակին կհետեւեն ուրիշ գործարարներ եւս եւ զարկ կտան մշակույթի զարգացմանը՝ ֆինանսական ու բարոյական աջակցությամբ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

«ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐՈՏԵՍԻԼ»

# Եվրոտեսիլյան մրցույթ եւ անպատասխան հարցադրումներ

Ինչպես արդեն հայտնի է, «Մանկական Եվրոտեսիլին» Հայաստանը ներկայացնելու է Compass band խումբը, որի առթիվ երեկ լրագրողների հետ էին հանդիպել Եվրոտեսիլի պատվիրակության նախագահ Գոհար Գասպարյանն եւ խմբի անդամները:

**Գ. Գասպարյանը** տեղեկացրեց, որ հայաստանյան պատվիրակությունը նոյեմբերի 26-ին կմեկնի Նիդեռլանդներ՝ մասնակցելու դեկտեմբերի 1-ին Ամստերդամում կայանալիք միջազգային հեռուստատեսային մրցույթին:

Compass band-ը բաղկացած է չորս հոգուց՝ Դավիթ Պարոնիկյան, Արշավիր Գրիգորյան, Արամ Ծատուրյան եւ Աբրահամ Ազնաուրյան, որոնք իրենց հիմնական մրցակիցներն են համարում Իսրայելի եւ Ռուսաստանի ներկայացուցիչներին:




«Մանկական Եվրոտեսիլի» գլխավոր փորձը տեղի կունենա նոյեմբերի 30-ին, որը շատ կարեւոր է մասնակիցների համար, քանի որ ժյուրիի անդամները հենց այդ օրն են կարծիք ձեւավորում մասնակիցների մասին», ասաց Գ. Գասպարյանը: Ինչպես միշտ, քվեարկությունը տեղի է ունենալու 50/50 հարաբերակցությամբ:

Հատկանշական է, որ «Մանկական Եվրոտեսիլ» երգի մրցույթում իրավունք ունեն մասնակցելու 10-15 տարեկան երեխաները, սակայն այս տարի, չգիտես ինչպես, 9,5 տարեկան մասնակից հայտնվեց նախընտրական փուլում, որը հենց Compass band խմբից էր: Հաղթանակից հետո աղմուկ բարձրացավ եւ խմբի կրտսեր անդամը լքեց խումբը: «**Ազգի**» հարցին, թե ինչպե՞ս էր այդ մասնակիցը հայտնվել նախընտրական փուլում եւ «Եվրոտեսիլի» հայաստանյան հանձնաժողովը արդյոք չէ՞ր նկատել դա, պատվիրակության նախագահ Գ. Գասպարյանը խուսափեց պատասխանից: Սակայն արդյո՞ք դա փոքրիկ խնդիր է. ի վերջո մենք մասնակցում ենք միջազգային մրցույթի, ինչպե՞ս կարող էինք նման խախտումով հանդես գալ Եվրոպայում, եւ, ընդհանրապես, եթե առկա էր խախտում, ապա ինչպե՞ս թողեցին այդ խումբը անցնի նախընտրական փուլ...

Այս տարի «Մանկական Եվրոտեսիլին» մասնակցում են 12 երկիր՝ Բելառուսը, Շվեդիան, Ադրբեջանը, Բելգիան, Ռուսաստանը, Իսրայելը, Ալբանիան, Հայաստանը, Ուկրաինան, Վրաստանը, Մոլդովան, Նիդեռլանդները: Ամստերդամում անցկացված վիճակահանության համաձայն՝ Compass band խումբը հանդես կգա 8-րդ համարի ներքո:

Ի դեպ, արդեն պատրաստ է խմբի տեսահոլովակը, որը նկարահանել է ռեժիսոր Հրանտ Մովսիսյանը՝ «Բիթլզի» ոճով: Compass band խմբի անդամներն ասացին, որ իրենք ներկայանում են «Բիթլզի» ոճով, քանի որ այն հետաքրքրական է, սակայն դա չի նշանակում, որ «Բիթլզին» սիրողները պետք է քվեարկեն իրենց օգտին, իսկ չսիրողները՝ ոչ:

Այս տարվա «Մանկական Եվրոտեսիլի» նշանաբանն է «Կոտրիր սառույցը», եւ այս տարի տեսաձեւավորումը, ինչպես նաեւ մրցանակը լինելու է սառցե միջավայրում:

Հաջողությո՛ւն մեր պատանիներին:

Ս. Հ.

# Ծանոթանանք Նանսի Թորոսյանի հետ

**Կանադայում հրատարակվող ԹՄՄիության «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի հոկտեմբերի 29-ի համարից տեղեկանում ենք, որ դեկտեմբերի 1-ին եւ 2-ին Թեքեյան մշակութային միության «Հայ բեմ» թատերախումբը Քվեբեկի «Թեատր Բոբուա» թատերասրահում ներկայացնելու է Մովսես Պչաքչյանի «Անկարելի կարելին» երեք գործողությամբ կատակերգությունը, Նանսի Իսսա Թորոսյանի մշակմամբ եւ բեմադրությամբ:**

**Այդ առթիվ հրատարակված հարցազրույցից քաղում ենք հետեւյալ տեղեկությունները բեմադրող Նանսիի մասին: Ծնվել է Արգենտինայում, բժիշկների ընտանիքում: Դերասան է, բեմադրիչ եւ դերասանության ուսուցչուհի: 9 տարի առաջ ամուսնու եւ երկու զավակների հետ տեղափոխվել է Կանադա եւ հաստատվել Մոնրեալում: Որպես դերասանուհի աշխատել է հիմնականում օտար շրջանակների հետ: Մեծ հետաքրքրություն է ունեցել իսպանացի թատերագիր եւ բանաստեղծ Գարսիա Լորկայի գործերի նկատմամբ: Անցյալ տարի Մոնրեալի Համազգայինի «Պետրոս Ադամյան» թատերախմբի համար բեմադրել է «Պահածոյի տուփերը» թատերգությունը: Ներկա «Անկարելի կարելին» պիեսը երկու աշխարհների՝ մեր եւ երջանկության աշխարհների «հանդիպման» մասին է, որտեղ մեր աշխարհից եկողը հարցուփորձի է ենթարկվում՝ պարզելու համար, թե արդյո՞ք արժանի է մտնելու երջանկության աշխարհը:**



**Պիեսի հեղինակը՝ Մովսես Պչաքչյանը, բնիկ հալեպահայ է, բայց մոտ 40 տարի ապրում է Փարիզում: Արձակագիր է, որ արժանացել է ԹՄՄ «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակին: Հուսանք Նանսի Թորոսյանին մի օր տեսնել մայր հայրենիքում:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Նարեկ Հախնազարյանի մենահամերգը

Նոյեմբերի 26-ին՝ ժամը 19:30-ին, «ՉուխաջյանՖԵՍՏ» Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնի շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա թավջութակահար Նարեկ Հախնազարյանի մենահամերգը (նվագակցությունը Գայանե Հախնազարյանի):

Երեկոն նվիրվում է հայ մեծ կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի հիշատակին: Ծրագրում կհնչեն Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Էդվարդ Միրզոյանի, Ադամ Խուդոյանի, Էդուարդ Հայրապետյանի եւ Սուրեն Զաքարյանի ստեղծագործություններից:

Հիշեցնենք, որ հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը անց է կացվում 2010թ-ից ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո: Միջոցառման կազմակերպիչներն են ՀՀ մշակույթի նախարարությունը, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը եւ Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը:

Այսուհետ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի բոլոր համերգների յուրաքանչյուր գնված տոմսի հասույթի 10%-ը նվիրաբերվելու է «Նվիրի՛ր կյանք» բարեգործական հիմնադրամին, որն իր ամբողջ ներուժն ուղղում է քաղցկեղով եւ արյան հիվանդություններով տառապող հայ մանուկների կյանքի փրկությանը:

# Մոր ամենալավ նվերը որդուն

## «Լեւոն Արոնյան» գրքի շնորհանդեսը

***«Տիգրան Մեծ» հրատարակչությունը 3 հազար տպաքանակով լույս է ընծայել Սեդա Արոնովա-Ավագյանի «Լեւոն Արոնյան» գիրքը: Այն ինքնատիպ է նրանով, որ հեղինակը մեր տաղանդավոր գրոսմայստերի մայրն է: Մասնագիտությամբ լեռնային ինժեներ Սեդա Արոնովան գրքի ստեղծման գաղափարը վաղուց էր փայփայում եւ կարողացավ իրականացնել՝ յուրօրինակ նվեր մատուցելով որդու 30-ամյակին: Գիրքն իր մեջ ներառում է Լեւոնի կենսագրության մանրամասները, ինչպես նաեւ նրա անցկացրած մի շարք ուշագրավ պարտիաները՝ Արոնյանի մեկնաբանությամբ:***




Երեկ «Գոլդեն Թյուլիփ» հյուրանոցում կայացավ գրքի շնորհանդեսը, որին ներկա էր նաեւ հանրապետության նախագահի, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը:

Դիմելով ներկաներին, **Սեդա Արոնովան** մասնավորապես ասաց. «Այս գիրքը գրել եմ տղայիս 30-ամյակի առթիվ, քանի որ ավելի լավ նվեր դժվար էր նրան մատուցել: Եթե այս գիրքն ընդունվի ընթերցողների կողմից, ապա մտադիր եմ հրատարակել եւս մեկը: Այն կլինի ոչ թե Լեւոն Արոնյանի, այլ՝ գրոսմայստեր Լեւոն Արոնյանի մասին, նրա հասուն շրջանի, անցած ուղու, ստեղծագործական կյանքի ու նվաճումների մասին: Ներողություն եմ խնդրում, որ գիրքը ռուսերեն եմ գրել, քանի որ վախեցա Լեւոնի տված հարցազրույցների, պարտիաների մեկնաբանությունների, նրա մասին մյուս նշանավոր շախմատիստների ասածների թարգմանությունների ժամանակ հնարավոր աղավաղումներից: Բացի այդ, շատ կցանկանայի, որ ռուս ընթերցողները եւս ծանոթանային այս գրքին:

Գրքի հրատարակմանը մեծապես նպաստել է իմ ընտանիքը, որը ոգեշնչել է ինձ: Շնորհակալ եմ նաեւ մեր ընտանիքի բարեկամ Վարդան Պողոսյանին՝ մեզ աջակցելու համար, ինչպես նաեւ գրքի առաջաբանը գրած պրոֆեսոր Գագիկ Հակոբյանին, խմբագիր Ալբերտ Նալբանդյանին եւ նկարիչ Արտակ Խաչատրյանին:

Շնորհակալություն եմ հայտնում այս գեղեցիկ երեկոյի համար: Ինձ համար շատ անսպասելի էր նման միջոցառման կազմակերպումը: Շատ շոյված եմ: Հպարտ եմ, որ ծնել ու դաստիարակել եմ ազնիվ ու լավ քաղաքացու, շախմատիստի, որը կյանքը չի խնայում Հայաստանի դրոշը աշխարհի տարբեր երկրներում ծածանելու համար: Այս 7 տարվա ընթացքում նա կարողացել է իր հետեւից տանել մեր խիզախ հավաքականին, որը երեք անգամ նվաճել է օլիմպիական բարձունքը»:



Սեդա Արոնովան իր եւ որդու ստորագրությամբ գիրքը հանձնեց հանրապետության նախագահին:

Երեկոյի ընթացքում գրքի եւ Լեւոն Արոնյանի մասին ջերմ խոսքեր ասացին Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, ժամանակին շախմատի օլիմպիական մարզադպրոցի տնօրեն Հովիկ Խալիկյանը, ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, Լեւոնի մարզիչ եւ մտերիմ ընկեր Գաբրիել Սարգսյանը, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանը եւ շախմատային մեկնաբան Գագիկ Հովհաննիսյանը:

**Ռոբերտ Ամիրխանյանը** տեղեկացրեց, որ ոգեշնչված Ստամբուլի շախմատի համաշխարհային օլիմպիադայում հայ շախմատիստների փառահեղ նվաճմամբ, գրել է նոր մյուզիքլ, որից մի հատված ունկնդրեցին ներկաները: **Գագիկ Հովհաննիսյանն** էլ նշելով Լեւոն Արոնյանի կայացման գործում ծնողների մեծ դերը, ավելացրեց, որ Լեւոնը բացի հանճարեղ շախմատիստ լինելուց, նաեւ հրաշալի գիտելիքներ ունի գրականությունից, փիլիսոփայությունից եւ գեղանկարչությունից: Նա նաեւ շեշտեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մեծ ներդրումը, որի անմիջական ջանքերի շնորհիվ Լեւոն Արոնյանը վերադարձավ հայրենիք ու կրկին հանդես եկավ Հայաստանի դրոշի ներքո: Իր ելույթի վերջում Գագիկ Հովհաննիսյանը «Հայերի հաղթարշավը Ստամբուլում» գրքի առաջին օրինակը հանձնեց ՀՀ նախագահին:

Երեկոյի վերջում **Լեւոն Արոնյանն** իր շնորհակալությունը հայտնեց ներկաներին եւ անձամբ Սերժ Սարգսյանին, նշելով, որ անչափ հուզված է, կարծես երազ լինի: Նա խոստացավ իր բոլոր ջանքերն ու ունակությունները ներդնել բոլորի երազանքը իրականացնելու՝ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար:

# Ողեգրերից 19-ի տերերն արդեն հայտնի են

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի 5-րդ տուրի հանդիպումներից հետո ժամկետից շուտ հայտնի դարձան հաջորդ փուլի 13 մասնակիցները: Պայքարը կշարունակեն «Անժին», «Ատլետիկոն», «Վիկտորիան», «Ֆեներբահչեն», Մենխենգլադբախի «Բորուսիան», «Բորդոն», «Նյուքասլը», «Նապոլին», «Դնեպրը», «Գենկը», «Սպարտան», «Լացիոն» եւ «Լեւանտեն»: Ավելի վաղ 1/16 եզրափակիչի ուղեգիր էին նվաճել Կազանի «Ռուբինը», «Ինտերը», «Բայերը», «Հաննովերը», «Լիոնը» եւ «Մետալիստը»:

5-րդ տուրում հաջող խաղացին նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների թիմերը: Մախաչկալայի «Անժին» սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնեց «Ուդինեզեին»: Գոլերից մեկն իր օգտին գրանցեց Սամուել Էտո՛Օ-ն: «Անժին» A խմբում 10 միավորով գլխավորում է աղյուսակը: 7-ական միավոր ունեն «Լիվերպուլն» ու «Յանգ Բոյզը», որոնց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2:

F խմբում հաջող են հանդես գալիս «Դնեպրի» ֆուտբոլիստները, որոնք հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեցին հոլանդական «Էյնդհովենին»: «Դնեպրն» էլ 12 միավորով առաջատարն է: Խմբից մյուս ուղեգրի տերը՝ «Նապոլին» մրցակցի դաշտում 2-1 հաշվով հաղթեց շվեդական ԱԻԿ-ին:

«Ռուբինը», որ արդեն «Ինտերի» հետ միասին ապահովել էր հաջորդ փուլի ուղեգիրը, Կազանում 3-0 հաշվով պարտության մատնեց իտալական ակումբին: Իսկ Բաքվի «Նեֆթչիի» եւ սերբական «Պարտիզանի» մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:

K խմբում Խարկովի «Մետալիստը» սեփական դաշտում 2-0 հաշվով պարտության մատնեց «Բայերին»: Ուկրաինական ակումբը 13 միավորով գլխավորում է աղյուսակը: Չնայած պարտությանը, «Բայերն» էլ մտավ հաջորդ փուլ: «Ռոզենբորգը» հաղթեց ավստրիական «Ռապիդին»՝ 3-2:

Չեխական «Վիկտորիան» պորտուգալական «Ակադեմիկայի» հետ խաղն ավարտեց ոչ-ոքի՝ 1-1: «Վիկտորիայի» կազմում Էդգար Մալաքյանը փոխարինման դուրս եկավ 84-րդ րոպեին:

B խմբում հանդես եկող «Վիկտորիային» ոչ-ոքին էլ բավարար էր հաջորդ փուլ մտնելու համար: Աղյուսակը 12 միավորով գլխավորող Մադրիդի «Ատլետիկոն» սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց Իսրայելի «Հապոելին»:

Տուրի մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. «Բորուսիա» Մ.-ԱԵԼ՝ 2-0, «Մարսել»-«Ֆեներբահչե»՝ 0-1, «Նյուքասլ»-«Մարիտիմու»՝ 1-1, «Բրյուգե»-«Բորդո»՝ 1-2, «Ստյաուա»-«Շտուտգարտ»՝ 1-5, «Մոլդե»-«Կոպենհագեն»՝ 1-2, «Վիդեոտոն»-«Գենկ»՝ 0-1, «Բազել»-«Սպորտինգ»՝ 3-0, «Սպարտա»-«Լիոն»՝ 1-1, «Լացիո»-«Տոտենհեմ»՝ 0-0, «Պանատինաիկոս»-«Մարիբոր»՝ 1-0, «Հելսինգբորգ»-«Լեւանտե»՝ 1-3, «Հաննովեր»-«Տվենտե»՝ 0-0:



# Մխիթարյանը կրկին լավագույնն է

**Հենրիխ Մխիթարյանը «Շախտյորի» պաշտոնական կայքում անցկացված հարցման արդյունքներով ճանաչվել է թիմի առաջին շրջանի լավագույն ֆուտբոլիստ: Նրա օգտին քվեարկել են 1084 ֆուտբոլասերներ, ինչը կազմում է հարցման մասնակիցների 76,02 տոկոսը: Մխիթարյանի առավելությունն իր խաղընկերների նկատմամբ բացահայտ է: 2-րդ տեղը գրաված թիմի ավագ Դարիո Սռնայի օգտին ձայն են տվել ընդամենը 68 ֆուտբոլասերներ (4,77 տոկոս), իսկ լավագույն եռյակը եզրափակել է բրազիլացի Վիլիանը:**

**Հիշեցնենք, որ «Շախտյորը» հիանալի հանդես եկավ Ուկրաինայի առաջնության 1-ին շրջանում՝ հաղթելով բոլոր 15 խաղերում: Իսկ Հենրիխ Մխիթարյանը 16 գնդակով գլխավորում է առաջնության լավագույն ռմբարկուների ցուցակը: Նրա ցուցանիշը ռեկորդային է Ուկրաինայի առաջնություններում 1-ին շրջանում խփած գոլերի քանակով:**

# Արմեն Նազարյանը գլխավորեց Բուլղարիայի ըմբշամարտի հավաքականը



**Օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Արմեն Նազարյանը, որ իր 2-րդ ոսկե մեդալը նվաճել էր Բուլղարիայի հավաքականում հանդես գալիս, նշանակվել է այդ երկրի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ: Այդ պաշտոնում նա կփոխարինի Բրատան Ցենովին, որը Բուլղարիայի հավաքականում 4 տարի աշխատելուց հետո հրաժարական էր տվել: Արմեն Նազարյանին կօգնեն Վալենտին Ռոնչեւն ու Սերաֆիմ Բարզակովը: Այս մասին տեղեկացնում է capital.bg կայքը:**

**«Կարեւոր է, որ տղաները վստահում են ինձ: Առջեւում շատ կարեւոր մրցաշարեր են մեզ սպասում, ուստի պետք է այժմվանից լրջորեն նախապատրաստվենք դրանց: Հավաքականի դռները բաց են բոլորի առջեւ: Ով արժանի է, նա էլ հանդես կգա Բուլղարիայի հավաքականում», նշել է Արմեն Նազարյանը:**

**Արմեն Նազարյանը նորանկախ Հայաստանի առաջին օլիմպիական չեմպիոնն է: 1996-ին, երբ Հայաստանն առաջին անգամ որպես անկախ պետություն առանձին մասնակցեց Ատլանտայի ամառային օլիմպիադային, Արմեն Նազարյանը մեր մարզիկներից առաջինն էր, որ հունահռոմեական ոճի ըմբշամարտի մրցումներում նվաճեց չեմպիոնի տիտղոսը: Օլիմպիադայից հետո նա տեղափոխվեց Բուլղարիա եւ օլիմպիական հաջորդ ոսկե մեդալն արդեն նվաճեց այդ երկրի հավաքականի կազմում:**

**Նշենք, որ վերջին շրջանում լուրեր էին պտտվում, թե Արմեն Նազարյանը մտադիր է վերսկսել իր ելույթներն ու մասնակցել 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիադային:**

# Յուրա Մովսիսյանի վնասվածքը լուրջ է

Իտալիայում բուժզննումը ցույց է տվել, որ Յուրա Մովսիսյանի վնասվածքը սպասվածից ավելի լուրջ է: 25-ամյա ֆուտբոլիստը ներկայումս «Կրասնոդարում» մարզվում է անհատական ծրագրով, սակայն ոտնաթաթում դեռեւս զգում է ցավերը: Թիմի գլխավոր մարզիչ Սլավոլյուբ Մուսլինը նշել է, որ չպետք է ռիսկի դիմել: Ուստի շատ հնարավոր է, որ Յուրա Մովսիսյանը մինչեւ գարուն այլեւս խաղադաշտ դուրս չգա: Թեեւ նա չի բացառել, որ այս տարվա վերջին հանդիպմանը հնարավոր է, որ Մովսիսյանը մասնակցի:

# Մեկնարկում է Լեոնիդ Ազգալդյանի հուշամրցաշարը

Այսօր «Սպիտակ» մարզաառողջարարական համալիրի լողավազանում կմեկնարկի արցախյան ազատամարտի հերոս, նախկին ջրագնդորդ Լեոնիդ Ազգալդյանի ավանդական հուշամրցաշարը: Այն կազմակերպել են ջրագնդակի հայկական դաշնությունը, «Լեոնիդ Ազգալդյան» բարեգործական հիմնադրամը եւ «Ինստիգեյթ» ՓԲԸ-ն: Մրցաշարի անցկացմանը կաջակցեն նաեւ ՀԱՕԿ-ն ու սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը:

Հուշամրցաշարին կմասնակցեն Երեւանի «Մասիս», «Երեւան», «Վիկտորիա», «Արմադա», «Ակվա Լենդ» եւ «Սպիտակ» թիմերը:

# «Զենիթը» սպառնում է դուրս գալ առաջնությունից

Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» բաժնետերերը սպառնացել են թիմը դուրս հանել ՌԴ պրեմիեր լիգայի առաջնությունից ու մասնակցել այլ երկրի առաջնությանը: «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերը հայտարարել է, որ «Զենիթը» կարող է ներկայացնել Սեւաստոպոլը ու հանդես գալ Ուկրաինայի առաջնությունում:

Այս սպառնալիքները հնչել են «Զենիթին» Մոսկվայի «Դինամոյի» հետ անավարտ մնացած խաղում տեխնիկական պարտություն գրանցելուց հետո: Հիշեցնենք, որ այդ խաղում ֆուտբոլասերները ճայթռուկներ էին նետել խաղադաշտ, որոնցից մեկը վնասել էր «Դինամոյի» դարպասապահ Անտոն Շունինին, որին տեղափոխել էին հիվանդանոց: Իսկ հանդիպման մրցավար Ալեքսեյ Նիկոլաեւը դադարեցրել էր խաղը ու այլեւս չէր շարունակել: Այդ միջադեպի համար Ռուսաստանի ֆուտբոլային միության կարգապահական կոմիտեն բացի տեխնիկական պարտությունից, նաեւ 1,1 մլն ռուբլով տուգանել էր «Զենիթին», որը պետք է սեփական հարկի տակ նշանակված առաջիկա 2 խաղերն անցկացնի առանց հանդիսականների:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Օրվա հետքերով

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

## Հայոց նպաստող երկու «Արդարասէր» անձերու Պադովա քաղաքի շքանշանին յանձնումը

14 Հոկտեմբեր 2012-ին Պադովայի քաղաքապետարանը պարգեւատրեց «Արդարասէր» մարդու (Righteous) կոչումով եւ քաղաքի կնիքով տաս անձնաւորութիւններ, որոնք իրենց կեանքը վտանգած են բռնաբարման եւ քաղաքական ծայրայեղութիւններու ենթարկուած մարդոց օգնելու համար: 2008-ին Պադովայի քաղաքապետարանը բացաւ «Արդարասէրներու տուն»-ը կամ «Պարտէզ»-ը, որ քաղաքի կեդրոնին մօտ լայն կանաչութեան մը մէջ կը գտնուի եւ բաղկացած է՝ Էլիօ Արմանօ անունով պադովացի արուեստագէտին քանդակազարդած անհամաչափ մենաքարերու պղնձածեփ կոթողային շարքէ մը: Մենաքարերը, որոնց ետին խոշոր սեւագոյն պատ մը կայ, 20-րդ դարու պատերազմները, ցեղասպանութիւնները եւ մարդկային ողբերգութեանց պատճառած կործանումն ու աւերը կը խորհրդանշեն: Արդարասէրներու պարտէզին դիմաց կը գտնուի «Անանուն արգելափակուած»-ի տաճարը, որ 2-րդ համաշխարհային պատերազմէն վերջ շինուեցաւ տեղւոյն Հ. Ջովաննի Ֆորթին վարդապետին նախաձեռնութեամբ: Ֆորթին վրդ.ը, որ պատերազմի ընթացքին հրեայ իտալացի քաղաքացիներուն օգնելուն պատճառով արգելափակուեր էր Դախաուի համակեդրոնացման ճամբարին մէջ, փափաքած է տաճար մը կանգնել ի յիշատակ պատերազմի անթիւ զոհերուն: Արդարասէրներու պարտէզին զանգուածային կառոյցով Պադովայի քաղաքապետարանը կուզէ կորուստէ փրկել 20-րդ դարու ողբերգութեանց յիշատակը եւ գնահատել ու մեծարել «Արդարասէր»-ներու օրինակը: Իր գործունէութեամբ «Արդարասէր»-ը ատելութեան արմատները կը խզէ եւ կը կերպաւորուի իբրեւ միջազգային խորհրդանիշ այն անձերուն համար, որ կը ձգտին մտածումի ազատութեան եւ արիութեան, ի հեճուկս արտաքին ճնշումի եւ հալածանքի:

«Արդարասէրներու պարտէզ»ին բացօթեայ համալիրի մուտքին Հաննահ Արենտի մէկ խօսքը քանդակուած է կոթողային սեւագոյն պատին վրայ. «Կարելի է միշտ ընտրել՝ այո՛ ըսել թէ ոչ»: Այս խօսքը կ'ուղղէ Կեդրոնի գիտական յանձնախումբին գործունէութիւնը, որուն համաձայն ամէն տարի հրեայ, հայ, ռուանդացի եւ բոսնիացի արդարասէրներու շարք մը կ'ընտրուի: «Արդարասէրներու տան» գիտական յանձնախումբի նախագահն է Պադովայի քաղաքապետը, իսկ անդամներէն մէկը՝ մանաւանդ հայկական հարցերուն առնչութեամբ՝ Վարդան Ջաքոմելլին է, «Իտալիարմենիա» ընկերակցութեան նախկին նախագահը: 2008-էն ի վեր աւելի քան 60 ծառ տնկուած է Արդարասէրներու պարտէզին մէջ ի յիշատակ 20-րդ դարու ցեղասպանութիւններու հայ, հրեայ, հութու, թուցի եւ բոսնիացի զոհերուն:

Հայ ազգին համար «Արդարասէր»-ներու շարքը կը բաղկանայ հետեւեալ անուններէն. **Ջակոմօ Գորրինի**, Տրապիզոնի մէջ Իտալիոյ դեսպան՝ 1911-էն մինչեւ 1915. փորձած է ամէն կերպով հայերուն օգտակար ըլլալ եւ երբ ետ կանչուած է Իտալիա, ճիգ չէ խնայած՝ իբրեւ դէպքերուն ականատես՝ որպէսզի Եւրոպայի հասարակութիւնը եւ կառավարութիւնները հայերուն օգնեն: **Արմին Թէոֆիլ Վեգներ**, գերմանացի զինուորական հիւանդապահ մը, որ Անատոլիոյ մէջ Օսմանեան բանակին ծառայելով, կրցած է հայոց կրած տառապանքը լուսանկարներով փաստագրել: **Այշէ Նուր Զարաքօլու**, թրքուհի, փաստաբան եւ հրատարակիչ, որ մարդկային իրաւունքներու գործօն պաշտպան ըլլալով, Թուրքիոյ ազգային փոքրամասնութեանց իրաւունքներուն համար պայքարած է իր ամուսնին՝ Ռագըպ Զարաքօլուի հետ եւ այս պատճառով բազմիցս բանտ մտած: **Հասան Ամջա**, Դամասկոսի մէջ Ջեմալ փաշայի որոշմամբ հիմնուած արգելավայրի մը գլխաւոր պատասխանատուն. Պոլիս ետ կանչուելով՝ չորս յօդուած հրատարակած է Հայոց մեծ աղէտը պոլսեցիներուն ծանօթացնելու նպատակով: **Եակոբ Քիւնցլեր** եւ իր կինը՝ **Էլիզաբեթ,** որոնց Եոհաննէս Լեփսիուսը Ուրֆայի հիւանդանոցը յանձնած է 1899-էն մինչեւ 1922. ապա ղեկավարած են հայերուն համար գործող զուիցերական բարեգործական հիմնարկին նախաձեռնած Լիբանանի Ղազիրի որբանոցը: **Հրանդ Տինք**, պոլսահայ լրագրող եւ մտաւորական, որ մտածումի ազատութեան համար իր պայքարին պատճառով նահատակուեցաւ 19 յունուար 2007-ին, իր իսկ հիմնած «Ակօս» լրագրի շէնքի սեմին: **Հենրի Մորգենթաու**, Պոլսոյ մէջ ԱՄՆ-ի դեսպան (1913-1916), որ Հայոց աղէտին մասին վկայած է Ամերիկայի ծերակոյտին եւ հանրային կարծիքին առջեւ: **Անատոլ Ֆրանս**, ֆրանսացի վիպագիր, որ ծանօթացուցած է Սուլթան Համիտի 1895-ի հալածանքները հայոց դէմ՝ «Պրօ-Արմենիա» թերթի սիւնակներէն եւ Սորբոնի մէջ կազմակերպած մեծ ցոյցով: **Ֆեթհիյէ Չեթին**, թուրք փաստաբանուհի եւ մարդկային իրաւունքներու գործօն պաշտպան, հեղինակ՝ Աննէաննէմ գրքին, ուր կը պատմէ՝ մօրը ձեռքէն առեւանգուած եւ բռնի իսլամացուած իր հայուհի մեծ մայրիկին պատմութիւնը:

Այս տարի, 14 հոկտեմբերին, Պադովայի Արդարասէրներու կնիքը, հայերու համար, վիճակեցաւ **Ֆայէզ էլ-Ղուսէին** բեդուին փաստաբանին եւ **Ռագըպ Զարաքօլու** թուրք մտաւորականին եւ հրատարակչին: Առաջինը Հայոց ցեղասպանութեան ականատես եղած ըլլալով, այդ մասին վկայած է արաբերէն լեզուով գրի առած իր յուշերուն մէջ, մերկացնելով տեսածներուն իսկական շարժառիթները, որպէսզի Եւրոպայի աչքին Իսլամը չերեւէր որպէս ծայրայեղական, ոճրային կրօնք: Ռագըպ Զարաքօլու, բազմաթիւ անգամներ բանտ մտած իր կնոջ՝ վերոյիշեալ Այշէ Նուրի հետ, ամբաստանուած է թրքական ինքնութեան դէմ դաւաճանութեամբ եւ վտանգաւոր գործունէութիւններու որպէս ներշնչարար: Ռագըպ եւ կինը՝ հայ, ասորի եւ յոյն փոքրամասնութեանց խնդիրներուն մասին շարք մը գիրքեր թարգմանած են եւ հրատարակած՝ «Բելգէ» հրատարակչատան միջոցով:

Հանդիսակատարութիւնը սկսաւ առաւօտ ժամը 10-ին Պադովայի «Արդարասէրներու պարտէզ»ին մէջ եւ շարունակուեցաւ մինչեւ ժամը 13, Վենետիկի եւ Պադովայի սահմանագծին վրայ գտնուող Նովենդա Պադովանա դալարաւէտ աւանին մէջ, դէպի ուր ընդարձակուած է արդէն «Արդարասէրներու պարտէզ»-ը եւ որուն շարունակութիւնը պէտք է հասնի մինչեւ Ադրիական ծով: Յետ ուղերձներու եւ վկայութիւններու, ընտրուած տաս «Արդարասէր»-ներուն ի պատիւ տնկուած տասը ծառերուն եւ պղինձէ կոթողներուն բացումը կատարուեցաւ: ՀՀ Իտալիոյ դեսպան Պր. Ռուբէն Կարապետեանի փոխարինութեամբ խօսք առաւ ՀՀ Իտալիոյ պատուոյ հիւպատոսը՝ պր. Պիետրօ Քիւչիւքեան, որ ուրուագրեց Ֆայէզ էլ-Ղուսէինի եւ Ռագըպ Զարաքօլուի անձերն ու հայանպաստ գործունէութիւնը: Ֆայէզ էլ-Ղուսէինի եւ Ռագըպ Զարաքօլուի ծածկուած պղինձէ կոթողները բացուեցան Պիետրօ Քիւչիւքեանի, Վարդան Ճաքոմելլիի եւ Հ. Լեւոն Զէքիեանի կողմէ միասնաբար:

Կէսօրէ վերջ ժամը 16-ին, հանդիսաւոր պարգեւատրութիւնը եւ «Պադովայի արդարասէրներու կնիք»ին յանձնումը տեղի ունեցաւ «Palazzo della Ragione» կոչուած, իտալական արուեստի գլուխ գործոց՝ Պադովայի միջնադարեան դատարանին մէջ: Ֆայէզ էլ-Ղուսէինի սուրիաբնակ որդին չէր կրցած ժամանել երկրի քաղաքական կացութեան պատճառով: Իսկ Ռագըպ Զարաքօլուն կնիքը ստացաւ պրոֆ. Ջուլիանօ Պիզանիի ձեռքէն: Թուրք լրագրողը խօսքին մէջ ընդգծեց կարեւորութիւնը մտածումի ազատութեան համար պայքարին, որպէսզի Թուրքիոյ մէջ մարդկային իրաւունքները դադրին ոտնակոխ ըլլալէ եւ պատմական իրադարձութիւնները չծածկուին: Իր վերջին բանտարկութեան ակնարկելով, ըսաւ՝ «Մեզի համար բանտը վանքի պէս եղած է, ուր կը խոկանք եւ կը գրենք»: Ռագըպ Զարաքօլուն Պադովայի շքանշանը նուիրեց իր զաւակին՝ Դենիզին, որ բանտ մտած է 17 Հոկտեմբեր 2011-ին եւ դեռ արգելափակուած կը մնայ:

ԴԻՒԱՆ ՊՌ-ԱՐԱՔՍ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթի կազմակերպման եւ անցկացման մասին**

«Կասկադ Ինվեստմենտս» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ Ընկերության 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն ընկերությունները, որոնք ունեն.

▼ Ֆինանսական կազմակերպություններում ավելի քան 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ (ընդ որում, մրցույթում նախապատվությունը կտրվի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական ընկերություններին):

▼ Աուդիտ իրականացնող խմբի ղեկավարը պետք է ունենա աուդիտորի վկայական եւ ֆինանսական ընկերության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ, իսկ աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների առնվազն կեսը՝ առնվազն 3 տարվա աուդիտորի աշխատանքային փորձ:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն տեխնիկական եւ ֆինանսական հայտեր՝ մեկ ծրարով:

**Տեխնիկական հայտը** պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունները եւ փաստաթղթերը՝

ա) մրցույթի մասնակցի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, պետական գրանցման վկայականի, կանոնադրության, աուդիտորական գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի պատճենները

բ) աուդիտի ընդգրկման բնագավառները

գ) աուդիտի անցկացման ժամկետներն առաջին այցելությունից մինչեւ վերջնական եզրակացության տրամադրումը

դ) նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից ֆինանսական կազմակերպություններին նմանատիպ ծառայությունների մատուցման ցանկը

ե) տեղեկություններ ղեկավարի եւ որակավորված աուդիտորների վերաբերյալ

զ) աուդիտորական կազմակերպության եւ աուդիտորների անկախությունը՝ ըստ «ՀՀ Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի, հաստատող փաստաթուղթ

է) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ եւ փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատուցվելիք ծառայությունների որակը:

**Ֆինանսական հայտը** պետք է պարունակի հետեւյալ տեղեկատվությունները եւ փաստաթղթերը՝

ա) ծառայությունների մատուցման ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ հարկերը եւ տուրքերը

բ) ծառայությունների մատուցման ընդհանուր գնի վճարման ձեւն ու պայմանները

գ) մասնագիտական գործունեության ձախողման կամ պայմանագրով ամրագրված պարտականությունների չկատարման ռիսկի ապահովագրությունը եւ ռիսկերի բավարար փոխհատուցման չափը

դ) Մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունը պարտավորվելու է «Աուդիտորական եզրակացություն» եւ «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը տրամադրել Ընկերությանը հայերեն եւ անգլերեն լեզուներով ոչ ուշ քան 2013 թվականի ապրիլի 20-ը:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված եւ ստորագրված ծրարով, որտեղ պետք է ներառված լինեն տեխնիկական եւ ֆինանսական հայտերը: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից եւ կրկնօրինակից:

Ընկերությունը մրցույթի մասնակիցներին տալիս է տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացվեն Ընկերությանը ոչ ուշ քան սույն թվականի դեկտեմբերի 24-ը, ժամը 18:00-ն:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա սույն թվականի դեկտեմբերի 25-ին, ժամը 10:00-ին, ք. Երեւան, Թամանյան 2, տարածք 48 հասցեով: Մրցույթի մասնակիցները գրավոր կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին մինչեւ 2013 թվականի հունվարի 15-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.
«Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ
ՀՀ, ք.Երեւան, Թամանյան 2, տարածք 48
հեռ. (+374 10) 544 730
Ֆաքս. (+374 10) 544 731
Էլ. Փոստ՝ info@cascadeinvmts.com






**ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ**
**ավտոտնակ-պահեստ (11մx4մx3մ) չափերի «Ֆիրդուսնցի» հարակից տարածքում:**
**093-42-57-92**

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: